



*Համարը N 292*

*Տիպը Հրաման*

*Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2000.03.31/3(45)*

*Ընդունող մարմինը Ֆինանսների նախարարություն*

*Ստորագրող մարմինը Ֆինանսների նախարար*

*Վավերացնող մարմինը*

*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.04.2000*

*Տեսակը Հիմնական*

*Կարգավիճակը Գործում է*

*Ընդունման վայրը Երևան*

*Ընդունման ամսաթիվը 30.07.1999*

*Ստորագրման ամսաթիվը 30.07.1999*

*Վավերացման ամսաթիվը*

*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

30 հուլիսի 1999 թ.  
ք. Երևան

N 292

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՄ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օր 41 հոդվածով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը վերապահված Հայաստանի Հանրապետության բյուջետային դասակարգման մանրամասները և կիրառման կարգը սահմանելու իրավասությունը՝

*Հրամայում եմ՝*

Հաստատել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանված Հայաստանի Հանրապետության բյուջետային դասակարգման մանրամասները և կիրառման կարգը համաձայն հրամանի NN 1-6 հավելվածների:

Առդիր՝

**Հավելված N 1.** Բյուջեների ծախսերի գործառական դասակարգումը.

**Հավելված N 2.** Բյուջեների ծախսերի (բացառությամբ ներգրավված փոխառու միջոցների մարման գծով ծախսերի) տնտեսագիտական դասակարգումը.

**Հավելված N 3.** Պետական բյուջեի դեֆիցիտի, համայնքների բյուջեների ծախսերի ֆինանսավորման համար ներգրավված փոխառու միջոցների մարման գծով ծախսերի դասակարգումը.

**Հավելված N 4.** Բյուջեների ծախսերի գերատեսչական դասակարգումը.

**Հավելված N 5.** Բյուջեների ծախսերի տարածքային դասակարգումը.

**Հավելված N 6.** Բյուջեների պարտքերի դասակարգումը:

Հավելված N 1  
 ՀՀ ֆինանսների նախարարի  
 1999 թվականի հունիսի 30-ի  
 N 292 հրամանի

**ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման խմբերի և ենթախմբերի անվանումները	Խմբի	Ենթա
Ա	1	2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	01	0
այդ թվում՝		
Օրենսդիր մարմին, պետական կառավարում և տեղական ինքնակառավարում	01	0
Պետական ֆինանսական կառավարում	01	0
Արտաքին քաղաքական գործունեություն	01	0
Արտաքին տնտեսական աջակցություն	01	0
Ընդհանուր բնույթի իրավական գործունեություն	01	0
Ընտրություններ և հանրաքվեներ	01	0
Ընդհանուր բնույթի պետական (համայնքային) այլ ծառայություններ	01	0
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	02	0
այդ թվում՝		
Ռազմական կարիքներ	02	0
Քաղաքացիական պաշտպանություն	02	0
Պաշտպանության բնագավառի այլ ծրագրեր	02	0
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	03	0
այդ թվում՝		
Հասարակական կարգի պահպանություն	03	0
Ազգային անվտանգություն	03	0
Դատական գործունեություն	03	0

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

	04	0
այդ թվում՝		
Կրթության և գիտության բնագավառում պետական կառավարում	04	0
Նախադպրոցական կրթություն	04	0
Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	04	0
Հատուկ ընդհանուր կրթություն	04	0
Արտադպրոցական դաստիարակություն	04	0
Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	04	0
Միջին մասնագիտական կրթություն	04	0
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն	04	0
Լրացուցիչ կրթություն	04	0
Գիտություն	04	1
Այլ ծրագրեր	04	1

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

	05	0
այդ թվում՝		
Առողջապահության բնագավառում պետական կառավարում	05	0
Հիվանդանոցային բուժօգնություն	05	0
Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն	05	0
Հիգիենիկ-հակահամաճարակային ծառայություն	05	0
Բուժօգնության այլ ծառայություններ	05	0
Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր	05	0

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

	06	0
այդ թվում՝		
Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառում պետական կառավարում	06	0
Կենսաթոշակային ապահովում	06	0
Նպաստներ բնակչությանը	06	0
Սոցիալական ապահովության միջոցառումներ	06	0
Այլ սոցիալական ծրագրեր	06	0

ՄՇԱԿՈՒՅԹ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՄՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ

	07	0
այդ թվում՝		
Մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառում պետական կառավարում	07	0
Գրադարաններ	07	0
Թանգարաններ և ցուցահանդեսներ	07	0
Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	07	0
Այլ մշակութային հիմնարկներ	07	0
Արվեստ	07	0
Կինեմատոգրաֆիա	07	0
Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	07	0
Սպորտ	07	0

Հեռուստառադիոհաղորդումներ	07	1
Հրատարակչություններ, խմբագրություններ	07	1
Տեղեկատվության ձեռք բերում	07	1
Կրոնական ծրագրեր	07	1
Երիտասարդական ծրագրեր	07	1
Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	07	1
Այլ ծրագրեր	07	1

<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</b>	<b>08</b>	<b>0</b>
այդ թվում՝		
Բնակարանային-կոմունալ տնտեսության պետական կառավարում	08	0
Բնակարանային տնտեսություն և բնակարանային շինարարություն	08	0
Աղբահանություն, թափոնների վերամշակում և փողոցների մաքրում	08	0
Ջրամատակարարում և կոյուղու համակարգերի շահագործում	08	0
Այլ ծրագրեր	08	0

<b>ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԼԻԲ</b>	<b>09</b>	<b>0</b>
այդ թվում՝		
Վառելիքային և էներգետիկ համալիրի պետական կառավարում	09	0
Էլեկտրաէներգետիկա	09	0
Ատոմային էներգետիկա	09	0
Վառելիքային համալիր	09	0
Էներգետիկայի բնագավառի այլ գործունեություն	09	0

<b>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ</b>	<b>10</b>	<b>0</b>
այդ թվում՝		
Գյուղատնտեսության բնագավառում պետական կառավարում	10	0
Հողերի բարելավման աշխատանքներ	10	0
Ձկնաբուծություն, ջրային տնտեսություն	10	0
Բույսերի պաշտպանություն և սերմնաբուծություն	10	0
Տոհմաբուծություն, անասնաբուծություն և հսկահամաճարակային միջոցառումներ	10	0
Անտառային տնտեսություն	10	0
Այլ ծրագրեր	10	0

<b>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԱԾՈՆԵՐ (բացառությամբ վառելիքի), ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>11</b>	<b>0</b>
այդ թվում՝		

Արդյունաբերության, հանքային հանածոների պաշարների, շինարարության և բնապահպանության բնագավառում պետական կառավարում	11	0
Լեռնահանքային արդյունաբերություն և երկրաբանահետախուզություն	11	0
Վերամշակող արդյունաբերություն	11	0
Նախագծահետախուզական աշխատանքներ	11	0
Բնության հատուկ պահպանվող տարածքներ	11	0
Բնապահպանական այլ միջոցառումներ	11	0
Այլ ծրագրեր	11	0

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ

այդ թվում՝	12	0
Տրանսպորտի, ճանապարհային տնտեսություն և կապի բնագավառում պետական կառավարում	12	0
Ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրական տրանսպորտ	12	0
Ջրային տրանսպորտ	12	0
Երկաթուղային տրանսպորտ	12	0
Օդային տրանսպորտ	12	0
Խողովակային տրանսպորտ	12	0
Ճանապարհային տնտեսություն	12	0
Կապ	12	0
Այլ ծրագրեր	12	0

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

այդ թվում՝	13	0
Առևտրի, սպասարկումների, մատակարարման գործունեության և ընդհանուր բնույթի տնտեսական ծառայությունների բնագավառում պետական կառավարում	13	0
Առևտուր, սպասարկումներ և մատակարարման գործունեություն	13	0
Նյութական ռեսուրսների պետական, համայնքային պահուստների ձևավորում ու պահպանում	13	0
Զբոսաշրջիկություն	13	0
Ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայություններ	13	0

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՍԲԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ

այդ թվում՝	14	0
Պետական (համայնքային) պարտքային պարտավորությունների հետ գործառնություններ	14	0
Տրանսֆերտային վճարումներ ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներ	14	0
Տրանսֆերտային վճարումներ համայնքների բյուջեներից ՀՀ պետական բյուջե կամ այլ համայնքների բյուջեներ	14	0
Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման գծով համայնքների բյուջեներից կատարվող ծախսեր	14	0

Կարճաժամկետ աջակցություն համայնքների բյուջեներին ՀՀ պետական բյուջեից բյուջետային փոխափոխությունների տրամադրման միջոցով	14	0
Այլ ծրագրեր	14	0

**Յ ՈՒ Յ ՈՒ Մ Ն Ե Ր**

**ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների (այսուհետև՝ բյուջեների) ծախսերի գործառնական դասակարգումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական գործառնությունների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է: Բյուջետային ծախսերը խմբավորված են 14 հիմնական խմբերում: Յուրաքանչյուր խումբն իր հերթին բաժանված է ենթախմբերունք ավելի մանրամասն են արտահայտում նշված խմբում խմբավորված ծախսերի ուղղությունները:

**Խ ՈՒ Մ Բ 01**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նշված խմբում արտահայտվում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ առանձին անհատներին կամ տնտեսական միավորներին ծառայությունների տրամադրման հետ կապ չունեցող գործունեության (օրենս իշխանության և գործադիր իշխանության մարմինների աշխատանքը, ֆինանսաբյուջետային, արտաքին քաղաքական գործունեությունը, ընտրությունների և հանրաքվեների անցկացումը և ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) գծով ծախսերը:

**Ենթախումբ 01. Օրենսդիր մարմին, պետական կառավարում և տեղական ինքնակառավարում**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

- ա) ՀՀ Նախագահի և ՀՀ Նախագահի աշխատակազմի պահպանման ծախսերը, ինչպես նաև ՀՀ մեղալիների, շքանշաններ դրանց կից փաստաթղթերի պատրաստման և ՀՀ Նախագահի ֆոնդից կատարվող ծախսերը,
- բ) ՀՀ Ազգային ժողովի, նրա աշխատակազմի և ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի պահպանման ծախսերը (ներառյալ պատգամավորական և նստաշրջանային ծախսերը), ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի նախագահի ֆոնդից կատարվող ծախսերը,
- գ) ՀՀ կառավարության աշխատակազմի պահպանման ծախսերը, ինչպես նաև ՀՀ վարչապետի ֆոնդից կատարվող ծախսերը,
- դ) ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի պահպանման ծախսերը,
- ե) ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարների և նրանց աշխատակազմերի պահպանման ծախսերը:

ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների կենտրոնական ապարատների պահպանման, ինչպես նաև հատուկ գործառնությունների իրականացման համար ստեղծվող այլ մարմինների պահպանման ծախսերը դասակարգվում են համապատասխան այն գործառնության, որի նպատակով դրանք ստեղծվել են:

**Ենթախումբ 02. Պետական ֆինանսական կառավարում**

Նշված ենթախումբում արտահայտվում են ֆինանսների բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմինն պահպանման, նշված մարմինների աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդերից հատկացումները, արժեթղթեր շուկայի պետական տեսչության պահպանման, ֆինանսական և հարկաբյուջետային (ֆիսկալ) կարգավորման և հարկադրման իրականացման, պետական ֆինանսների և պետական պարտքի կառավարման հետ կապված գործունեության գծով ծախսերը (գանձապետական հաշիվների բանկային սպասարկման, ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման, թանկարժեք մետաղների քարերի ձեռքբերման և վերամշակման, ՀՀ արժեթղթերի ձևաթղթերի տպագրության, տեղափոխման, թողարկումների գովազդի և հետ կապված ծախսերը), ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցման փոխհատուցման գծով ծախսերը:

**Ենթախումբ 03. Արտաքին քաղաքական գործունեություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են.

ա) արտաքին քաղաքական գործունեության բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանման ծախսերը.

բ) ՀՀ դեսպանությունների, ներկայացուցչությունների, ռազմական կցորդների պահպանման, արտասահմանում տեղաբաշխված կամ միջազգային կազմակերպություններին կից այլ դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունն պահպանման ծախսերը.

գ) միջազգային կազմակերպություններին անդամակցության և հատուկ մուծումները (բացառությամբ պետական արտաք պարտքի սպասարկման ծախսերի).

դ) արտասահմանյան պաշտոնական գործուղումների գծով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատուկ կենտրոնացված ֆոնդի միջոցների հաշվին իրականացվող ծախսերը.

ե) արտասահմանյան պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների գծով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատուկ կենտրոնացված ֆոնդի միջոցների հաշվին իրականացվող ծախսերը:

**Ենթախումբ 04. Արտաքին տնտեսական աջակցություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են.

ա) օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին պաշտոնական տրանսֆերտներ և ոչ ռազմաբնույթի այլ տիպի օգնություն տրամադրելու գծով ծախսերը,

բ) օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին վարկեր տրամադրելու գծով ծախսերը,

գ) տնտեսական օգնություն տրամադրելու նպատակով առաքելությունների, կադրերի պատրաստման և տեխնիկական օգնություն տրամադրելու գծով ծախսերը:

Հիշյալ ենթախմբում արտահայտվում են նաև միջազգային կազմակերպությունների միջոցով օգնություն տրամադրելու գծով ծախսերը:

**Ենթախումբ 05. Ընդհանուր բնույթի իրավական գործունեություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են հանրապետությունում իրավական գործունեության վերահսկման իրավասությամբ օժտված մարմնի՝ ՀՀ արդարադատության նախարարության կենտրոնական սպարատի, պետական նոտարական գրասենյակների, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, քաղաքացիական կացության ակտե գրանցման տարածքային բաժինների, արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնի, ինչպես նաև ընդհանուր բնույթի իրավական գործունեություն իրականացնելու նպատակով ստեղծվող այլ մշտական և ժամանակավոր մարմինների պահպանման ծախսերը:

**Ենթախումբ 06. Ընտրություններ և հանրաքվեներ**

Նշված ենթախմբում արտահայտվում են ընտրությունների (ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, տեղական ինքնակառավարման մարմինների) և հանրաքվեների կազմակերպման և անցկացման, ինչպես նաև մշտական հիմունքներով գործող ընտրական հանձնաժողովների պահպանման ծախսերը:

**Ենթախումբ 07. Ընդհանուր բնույթի պետական (համայնքային) այլ ծառայություններ**

Նշված ենթախմբում արտահայտվում են.

ա) ընդհանուր բնույթի ռազմավարական տնտեսական ծրագրեր մշակող մարմինների պահպանման ծախսերը, նշված ծրագրերի մշակման աշխատանքների կազմակերպման և իրականացման ծախսերը,

բ) վիճակագրական մարմինների պահպանման ծախսերը, վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման աշխատանքների կազմակերպման և իրականացման ծախսերը,

գ) տարածաշրջանային ինտեգրացման, ռազմատնտեսական և արտակարգ բնույթի (այլ հիմնական խմբերին չդասվող) ծրագրերն իրականացնող պետական մարմինների պահպանման ծախսերը, ինչպես նաև տարածաշրջանային ինտեգրացման

ծրագրերի իրականացման ծախսերը,

դ) պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման, պետական գույքի կառավարման ուղղությամբ պետական մարմինների կողմից իրականացվող գործունեության ծախսերը, ինչպես նաև նշված մարմինների պահպանման ծախսերը,

ե) պետական և համայնքային արխիվների պահպանման ծախսերը, այդ գործունեությունը ղեկավարող պետական մարմինների պահպանման ծախսերը,

զ) ընդհանուր բնույթի պետական և համայնքային այլ ծառայությունների իրականացման ծախսերը (ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ վերջինիս կողմից ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաքագրվող եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցման մասով, ՀՀ սեյմիկ պաշտպանության ազգային ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության պահպանման ծախսերը և այլն):

**Խ ՈՒ Մ Բ 02**

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Նշված խմբում արտահայտվում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում իրականացվող ծրագրերը և միջոցառումները:

**Ենթախումբ 01. Ռազմական կարիքներ**

Նշված ենթախմբում արտահայտվում են բանակի (ներառյալ պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը) պահպանման, տեխնիկայի, զենքի ու զինամթերքի ձեռքբերման և ռազմական շինարարության գծով գործունեությանը աջակցության ծախսերը:

**Ենթախումբ 02. Քաղաքացիական պաշտպանություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են խաղաղ պայմաններում քաղաքացիական հիմնարկների և բնակչության ուսուց ռազմական և արտակարգ իրավիճակներում քաղաքացիական հաստատությունների և բնակչության կողմից հմտություններ և բերելու նպատակով գորավարժությունների անցկացման, տարերային աղետների, վթարների առաջացման դեպքում բնակչությանը օգնության ցուցանելու նպատակով կազմակերպման, արտակարգ իրավիճակների վարչության համակարգի ստորաբաժանումներում գործունեության և պահպանման ծախսերը:

**Ենթախումբ 03. Պաշտպանության բնագավառի այլ ծրագրեր**

Նշված ենթախմբում արտահայտվում են սույն խմբի 01-02 ենթախմբերում չընդգրկված պաշտպանության բնագավառի վերաբերող այլ միջոցառումները:

**Խ ՈՒ Մ Բ 03**

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Նշված խմբում արտահայտվում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրապետությունում հասարակական կարգի պահպանության, ազգային անվտանգության ապահովման, դատական իշխանության իրականացման (ներառյալ Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող գործառնությունների) ուղղությամբ ծախսերը:

**Ենթախումբ 01. Հասարակական կարգի պահպանություն**



Նշված ենթախմբում արտահայտվում են.

- ա) ՀՀ ներքին գործերի նախարարության կենտրոնական ապարատի պահպանման ծախսերը,
- բ) ներքին գործերի պահպանման ծախսերը,
- գ) հրշեջ պահպանության իրականացման ծախսերը,
- դ) ճանապարհային ոստիկանության պահպանման ծախսերը,
- ե) քրեական պատիժների իրականացման կառուցվածքների պահպանման ծախսերը,
- զ) հասարակական կարգի պահպանության բնագավառին վերաբերող՝ սույն ենթախմբի վերը նշված կետերում չընդգրկված ծախսերը:

**Ենթախումբ 02. Ազգային անվտանգություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են.

- ա) ՀՀ ազգային անվտանգության նախարարության կենտրոնական ապարատի պահպանման ծախսերը,
- բ) սահմանապահ գործերի պահպանման ծախսերը,
- գ) ազգային անվտանգության բնագավառին վերաբերող՝ սույն ենթախմբի վերը նշված կետերում չընդգրկված ծախսերը:

**Ենթախումբ 03. Դատական գործունեություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են.

- ա) դատական համակարգի մարմինների պահպանման ծախսերը, այդ թվում ՀՀ սահմանադրական դատարանի, ընդհան իրավասության դատարանների (առաջին ատյանի դատարաններ, վճռաբեկ դատարան, վերաքննիչ դատարան), ինչպես նաև տնտեսական, զինվորական և օրենքով նախատեսված այլ դատարանների պահպանման ծախսերը,
- բ) ՀՀ գլխավոր դատախազության կենտրոնական ապարատի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների, դատական փորձաքննության ծառայությունների պահպանման ծախսերը,
- գ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն ցույց տված փաստաբանների աշխատանքի վարձատրության ծախսերը,
- դ) դատական գործունեությանը վերաբերող՝ սույն ենթախմբի վերը նշված կետերում չընդգրկված ծախսերը:

**Խ ՈՒ Մ Բ 04**

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Նշված խմբում արտահայտվում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կրթության և գիտության բնագավառում իրականացվող ծրագրերի գծով ծախսերը: Քաղաքացիական ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերին համանման ծրագրեր ունեցող ռազմական ուսումնական հաստատություններ պահպանման ծախսերը նույնպես արտացոլվում են այս խմբում: Սույն խմբում արտահայտվում են նաև ուսումնական հաստատություններին կից գործող սպորտային և առողջարարական կենտրոնների շահագործման և նյութական ապահովման ծախսերը:

**Ենթախումբ 01. Կրթության և գիտության բնագավառում պետական կառավարում**

Նշված ենթախմբում արտահայտվում են կրթության և գիտության բնագավառում պետական կառավարում իրականացն մարմինների (ներառյալ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի) պահպանման ծախսերը, ինչպես նաև հիշյալ բնագավառում կապիտալ ներդրումները:

**Ենթախումբ 02. Նախադպրոցական կրթություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են.

- ա) ընտանիքին աջակցող նախադպրոցական հիմնարկների՝ տարբերակված ծրագրերով մտուր-մանկապարտեզների,

մանկապարտեզների, նախադպրոցական դաստիարակության բնագավառում գործունեություն իրականացնող այլ հաստատությունների պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտային հատկացումների տրամադրման գծ ծախսերը.

բ) նշված բնագավառին վերաբերող առանձին այլ ծրագրերի իրականացման ծախսերը:

**Ենթախումբ 03. Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) բոլոր տիպի տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն իրականացն հանրակրթական (ցերեկային և հեռակա ուսուցում) դպրոցների (բացառությամբ ավագ դպրոցների արհեստագործական հոսք պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտային հատկացումների տրամադրման գծով ծախսերը.

բ) նշված բնագավառին վերաբերող առանձին ծրագրերի իրականացման ծախսերը (մասնավորապես, դպրոցականների ամառային հանգստի կազմակերպելու, դպրոցական դասագրքեր հրատարակելու, այլ բնակավայրերից հրավիրված մանկավարժների և դպրոց շունեցող բնակավայրերից դպրոցահասակ երեխաների փոխադրավարձերը փոխհատուցելու ծախս և այլն):

**Ենթախումբ 04. Հատուկ ընդհանուր կրթություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) հանրակրթական դպրոցի համապատասխան աստիճանի ծրագրով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցմանն աջակցող մանկատների և գիշերօթիկ դպրոցների պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտ հատկացումների գծով ծախսերը.

բ) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (խուլ ու համր երեխաների, կույր երեխաների, մտավոր և ֆիզիկական արատներով երեխաների և այլն) համար հատուկ հաստատությունների (այդ թվում՝ երկարօրյա և գիշերօթիկ), բացառությամբ հատուկ պորտային թեքումով դպրոցների) պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտային հատկացումների տրամադրման գծով ծախսերը.

գ) օրինազանց անչափահաս երեխաների ուսուցման և վերադաստիարակման հատուկ ռեժիմի դպրոցների պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտային հատկացումների տրամադրման գծով ծախսերը.

դ) նշված ոլորտին վերաբերող առանձին այլ ծրագրերի իրականացման ծախսերը:

**Ենթախումբ 05. Արտադպրոցական դաստիարակություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) ազատ ժամանցի կազմակերպման միջոցով սովորողների հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացման, ռազմահայրենասիրական դաստիարակչության, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերման, նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծող մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերի, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտային հատկացումների գծով ծախսերը.

բ) նշված ոլորտին վերաբերող առանձին ծրագրերի իրականացման ծախսերը:

**Ենթախումբ 06. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքա գործունեության համար նախապատրաստումն իրականացնող.

- բյուջետային հիմնարկի կարգավիճակ ունեցող միջնակարգ հանրակրթական դպրոցների (ավագ դպրոցների) արհեստագործական հոսքերի, այլ բյուջետային հիմնարկների ուսումնաարտադրական կենտրոնների պահպանման գծով

ծախսերը.

- բյուջետային հիմնարկի կարգավիճակ չունեցող միջնակարգ հանրակրթական դպրոցների (ավագ դպրոցների) արհեստագործական հոսքերի, ձեռնարկությունների և կազմակերպությունների ուսումնասիրտադրական կենտրոնների ծառայությունների գնման, տրանսֆերտային հատկացումների տրամադրման գծով ծախսերը.

բ) նշված ոլորտին վերաբերող առանձին այլ ծրագրերի իրականացման ծախսերը:

**Ենթախումբ 07. Միջին մասնագիտական կրթություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) միջնակարգ ընդհանուր կրթության հիմքի վրա ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացում միջին մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումը ապահովող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (քոլեջներ և ուսումնարաններ) պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտային հատկացումների տրամադրման գծով ծախսերը.

բ) նշված ոլորտին վերաբերող առանձին այլ ծրագրերի իրականացման ծախսերը:

**Ենթախումբ 08. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի կրթության զարգացման պահանջմունք ավարարող, բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերապատրաստումն ապահովող հաստատությունների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների (համալսարաններ, ինստիտուտներ, ակադեմիաներ կոնսերվատորիաներ) պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտային հատկացումների տրամադրման գծով ծախսերը.

բ) նշված ոլորտին վերաբերող առանձին այլ ծրագրերի իրականացման ծախսերը:

**Ենթախումբ 09. Լրացուցիչ կրթություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) մասնագիտական կրթության յուրաքանչյուր մակարդակի շրջանակում մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացումն ապահովող հանրակրթական, մասնագիտական, և լրացուցիչ կրթության ուսումնական հաստատությունների պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտային հատկացումների տրամադրման գծով ծախսերը.

բ) նշված ոլորտին վերաբերող առանձին այլ ծրագրերի իրականացման ծախսերը:

**Ենթախումբ 10. Գիտություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) գիտական ֆունդամենտալ հետազոտություններ իրականացնող հիմնարկների բազային ֆինանսավորման և գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության ֆինանսավորման (ներառյալ ակադեմիկոսներին տրվող պատվովճարների) գծով ծախսերը.

բ) գիտական թեմատիկ աշխատանքների ֆինանսավորման ծախսերը.

գ) գիտական աստիճանաշնորհման ֆինանսավորման ծախսերը:

Նշված ենթախումբում արտահայտվում են նաև ասպիրանտուրաների և դոկտորանտուրաների պահպանման գծով ծախսերը:

**Ենթախումբ 11. Այլ ծրագրեր**

Նշված ենթախումբում արտահայտվում են կրթության բնագավառին վերաբերող՝ սույն խմբի վերը նշված ենթախումբերին

չդասվող առանձին ծրագրերի իրականացման ծախսերը:

**Խ ՈՒ Մ Բ 05**

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

Նշված խմբում արտահայտվում են բնակչությանը բուժօգնություն ցուցաբերելու և հիվանդությունների կանխարգելման միջոցառումների, նշված բնագավառին վերաբերող առանձին ծրագրերի իրականացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 01. Առողջապահության բնագավառում պետական կառավարում**

Նշված ենթախմբում արտահայտվում են առողջապահության բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմինների, առողջապահության բնագավառի պետական տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների (եթ դրանք չեն դասակարգվում 01 հիմնական խմբի 01 ենթախմբում) պահպանման ծախսերը:

**Ենթախումբ 02. Հիվանդանոցային բուժօգնություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են հիվանդանոցների և նրանց կազմում ընդգրկված կառուցվածքային ստորաբաժանումների, լայն պրոֆիլի հիվանդանոցների, մասնագիտացված հիվանդանոցների, ծննդատների, մահճակալային ցանց ունեցող կենտրոնների և դիսպանսերների պահպանման, պետական պատվերի շրջանակներում բուժման ենթակա հիվանդությունների և մատուցման ենթակա ծառայությունների գծով նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտների տրամադրման գծով ծախսերը:

**Ենթախումբ 03. Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են ինքնուրույն պոլիկլինիկականների, ամբուլատորիանների, վնասվածքաբանական և բուժականանկաբարձական կետերի, մահճակալներ չունեցող դիսպանսերների պահպանման, պետական պատվերի շրջանակներում բուժման ենթակա հիվանդությունների և մատուցման ենթակա ծառայությունների գծով նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտների տրամադրման գծով ծախսերը:

**Ենթախումբ 04. Հիգիենիկ-հակահամաճարակային ծառայություն**

Նշված խմբում արտահայտվում են հիգիենիկ-հակահամաճարակային ստորաբաժանումների պահպանման ծախսերը:

**Ենթախումբ 05. Բուժօգնության այլ ծառայություններ**

Նշված ենթախմբում արտահայտվում են շտապ անհետաձգելի բժշկական օգնության, արյան փոխներարկման կայաններ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների, դատա-բժշկական և ախտաբանաանատոմիական փորձաքննության, կենտրոնացված դեղորայքի գնումների, դիսպանսերներում կազմակերպամեթոդական և կոնսուլտատիվ բուժօգնության և այլ ծախսերը:

**Ենթախումբ 06. Առողջապահական այլ ծառայություններ և ծրագրեր**

Նշված ենթախմբում արտահայտվում են բժիշկ-ինտերների վարձատրության, առողջապահության բնագավառին վերաբ

տեղեկատվական-վերլուծական աշխատանքների կատարման և նորմատիվային փաստաթղթերի մշակման, ախտահանման առողջապահական հարակից այլ ծառայություններ մատուցող հիմնարկների պահպանման ծախսերը, ինչպես նաև հանրապետությունից դուրս սահմանված կարգով բուժման ուղարկված հիվանդների ճանապարհածախսը: Սույն ենթախմբում արտահայտվում են նաև առողջապահական հիմնարկների նյութական բազայի նորացման և համալրման և այլ առանձին ծրագրերի գծով ծախսերը, եթե դրանք հնարավոր չէ դասել սույն խմբի որևէ այլ ենթախմբին:

**Խ ՈՒ Մ Բ 06**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ**

Նշված խմբում արտահայտվում են սոցիալական ապահովագրության նպատակով տրանսֆերտային վճարումների (թոշակներ, նպաստներ), ինչպես նաև առանձնահատուկ կարիքավոր անհատներին և բնակչության առանձին խմբերին (հաշմանդամներ, զառամյալներ և այլ) սոցիալական օգնության հատկացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 01. Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառի պետական կառավարում**

Նշված ենթախմբում արտահայտվում են սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառ պետական կառավարում իրականացնող մարմինների (ներառյալ աշխատանքի և սոցիալական զբաղվածության հանրապետ ծառայություն և նրա տարածքային կենտրոնների) պահպանման ծախսերը:

**Ենթախումբ 02. Կենսաթոշակային ապահովում**

Նշված ենթախմբում արտահայտվում են աշխատանքային և սոցիալական կենսաթոշակների վճարումները իրականացնող նպատակով կատարվող տրանսֆերտները (ներառյալ սպայական անձնակազմի և շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման, աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասների հետևանքով պատճառվ վնասի փոխհատուցումը):

**Ենթախումբ 03. Նպաստներ բնակչությանը**

Նշված ենթախմբում արտահայտվում են բյուջեից բնակչությանը նպաստների (օրինակ, ընտանեկան նպաստների, մինչև երկու տարեկան երեխա խնամող և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստների և ս վճարման նպատակով կատարվող տրանսֆերտների, ինչպես նաև նպաստների տրամադրման հետ կապված փոստային ծառայությունների վճարումների գծով ծախսերը:

**Ենթախումբ 04. Սոցիալական ապահովության միջոցառումներ**

Նշված ենթախմբում արտահայտվում են.

ա) ծերերի և հաշմանդամների (ներառյալ մանկահասակ հաշմանդամների) համար տուն-ինտերնատների, համանման ս հաստատությունների պահպանման, պետական պատվերի շրջանակներում նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտն տրամադրման գծով ծախսերը.

բ) բժշկա-սոցիալական վերականգնման և աշխատունակության փորձաքննության ծառայությունների ձեռք բերման ծախ

գ) հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովելու և վերանորոգելու գծով ծախսերը,

դ) հաշմանդամներին բենզինի արժեքը փոխհատուցելու գծով ծախսերը,

ե) կենսաթոշակառուներին օգնություն տրամադրելու գծով ծախսերը,

զ) սոցիալական ծառայությունների մարզային, Երևանի քաղաքային կենտրոնների պահպանման ծախսերը.

է) բժշկա-աշխատանքային փորձաքննության հանձնաժողովների պահպանման գծով ծախսերը,

ը) սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների և բժշկա-աշխատանքային փորձաքննության հանձնաժողովների համար փաստաթղթերի ձևաթղթերի տպագրման ծախսերը.

թ) կենտրոնացված կարգով ընտանեկան նպաստների նշանակման և վճարման, հաշմանդամների հաշվառման բանկի ստեղծման, աշխատանքների մեքենայացման և շահագործման գծով ծախսերը.

ժ) նշված բնագավառում իրականացվող այլ միջոցառումների իրականացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 05. Այլ սոցիալական ծրագրեր**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

Բնակչության առանձին խմբերին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրամական տեսքով օգնությունների, փոխհատուցումների, խրախուսումների տրամադրման գծով ծախսերը: Մասնավորապես, դրանց շարքին են դասվում վետերաններին պատվովճարների վճարման ծախսերը, բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի միանվագ փոխհատուցման ծախսերը, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված ազատամարտիկների գերեզմանների բարեկարգման ծախսերի փոխհատուցման գծով ծախսերը, ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհ (մահացած) զինծառայողների ընտանիքներին միանվագ սոցիալական ապահովագրության վճարների տրաման գծով ծախսերը, պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների (ազատամարտիկների) երեխաներին ԲՈՒՀ-ում վճարով ուսուցման արժեքի փոխհատուցումների գծով ծախսերը, փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումն գծով ծախսերը, բնակչության առանձին խմբերին տրված արտոնությունների դիմաց ձեռնարկություններին փոխհատուցումն տրամադրման գծով ծախսերը, տարերային աղետների, հրդեհների դեպքում դրամական օգնությունները և այլն:

**Խ ՈՒ Մ Բ 07**

**ՄՇԱԿՈՒՅԹ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՄՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ**

Նշված խումբում արտահայտվում են մշակույթի (ներառյալ տեղեկատվության և գրահրատարակչության), սպորտի և կրոն բնագավառում պետական գործունեության իրականացման, հանգստի և մարզական միջոցառումների կազմակերպման, կրոն և հասարակական գործունեության կարգավորման գծով ծախսերը:

**Ենթախումբ 01. Մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառում պետական կառավարում**

Նշված ենթախումբում արտահայտվում են մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմինների (ներառյալ ՀՀ կառավարությանն առընթեր պատմության և մշակույթի հուշարձան պահպանության վարչություն) պահպանման ծախսերը:

**Ենթախումբ 02. Գրադարաններ**

Նշված ենթախումբում արտահայտվում են գրադարանների, ՀՀ ազգային գրապալատի պահպանման, նրանց ծառայությունն գնման, տրանսֆերտների տրամադրման գծով ծախսերը:

**Ենթախումբ 03. Թանգարաններ և ցուցահանդեսներ**

Նշված ենթախումբում արտահայտվում են թանգարանների պահպանման, նրանց ծառայությունների գնման, թանգարանն տրանսֆերտների տրամադրման, ցուցահանդեսների կազմակերպման և անցկացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 04. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ**

Նշված ենթախումբում արտահայտվում են մշակույթի տների, ակումբների, կենտրոնների պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտների տրամադրման գծով ծախսերը:

**Ենթախումբ 05. Այլ մշակութային հիմնարկներ**

Նշված ենթախումբում արտահայտվում են այլ մշակութային հիմնարկների (տեղեկատվական-վերլուծական կենտրոններ, կենդանաբանական այգիներ) պահպանման, նրանց ծառայությունների գնման, տրանսֆերտների տրամադրման, ինչպես նաև մշակութային արժեքների պահպանման, արխիվների պահպանման, տեղեկատվության պահպանման և արխիվացման պետական պատվերի գծով ծախսերը:

**Ենթախումբ 06. Արվեստ**

Նշված ենթախումբում արտահայտվում են թատերական և համերգային կազմակերպությունների պահպանման, նրանց ծառայությունների գնման, վնասների ծածկման կամ տրանսֆերտային այլ հատկացումների, կենտրոնացված կերպով իրականացվող միջոցառումների գծով ծախսերը:

**Ենթախումբ 07. Կինեմատոգրաֆիա**

Նշված ենթախումբում արտահայտվում են կինոստուդիաների պահպանման կամ նրանց ծառայությունների (կինոնկարներ ստեղծման) գնման, վնասների ծածկման կամ տրանսֆերտային հատկացումների գծով ծախսերը:

**Ենթախումբ 08. Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում**

Նշված ենթախումբում արտահայտվում են հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գործերի իրականացվող ծախսերը, ինչպես նաև այդպիսի օբյեկտների հիմնանորոգման գծով ծախսերը:

**Ենթախումբ 09. Սպորտ**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) հանգստի կազմակերպման և մարզական միջոցառումների գծով ծախսերը,

բ) մարզական և սպորտով զբաղվելու համար այլ կառույցների շահագործման, պահպանման, շինարարության գծով ծախսերը,

գ) մրցումներին ազգային և տեղական թիմերի մասնակցության, ինչպես նաև հանդերձանքի ձեռքբերման, մարզիկների պատրաստման, առանձին մարզիկներին կամ թիմերին աուրսիդիաների հատկացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 10. Հեռուստառադիոհաղորդումներ**

Նշված ենթախումբում արտահայտվում են`

ա) պետական պատվերի շրջանակներում հեռուստա և ռադիոհաղորդաշարերի ու ծրագրերի պատրաստման (գնման) և հեռարձակման գծով ծախսերը.

բ) ծրագրերի պատրաստման և եթեր թողարկման, ռադիոհաղորդման և հեռուստատեսային կայանների համար անհրաժեշտության դեպքում ծախսերը.

գ) ՀՀ ռադիոհեռուստատեսության ռեզերվային բազայի պահպանման գծով ծախսերը.

դ) հասարակական կարծիքի ուսումնասիրման, ռադիոհեռուստառադիոհաղորդումների տեխնիկական վերահսկողության և կենտրոնացված տրանսպորտային ծառայությունների գծով ծախսերը.

ե) պետական պատվերի շրջանակներում հեռուստաֆիլմերի արտադրության գծով ծախսերը.

զ) միջպետական հեռուստառադիո միավորումների գործունեությանը (հաղորդումների նախապատրաստում և հեռարձակման անակցության ծախսերը:

**Ենթախումբ 11. Հրատարակչություններ, խմբագրություններ**

Նշված ենթախումբում արտահայտվում են հրատարակչությունների և խմբագրությունների (բացառությամբ 4 հիմնական 15 ենթախումբում արտացոլված ծախսերի) պահպանման կամ պետական պատվերի շրջանակներում նրանց ծառայություններ գնման, վնասների ծածկման, վարկերի տրամադրման, տպագրական սարքավորումների և տպագրության համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերման, այլ նպատակների իրագործման համար տրանսֆերտային հատկացումների գծով ծախսերը, ինչպես և կապիտալ ներդրումները: Սույն ենթախումբում արտահայտվում են նաև տեղեկատվության հավաքման և հրապարակված նյութարածման գծով հրատարակչությունների և խմբագրությունների կողմից իրականացվող ծախսերը:

**Ենթախումբ 12. Տեղեկատվության ձեռք բերում**

Նշված ենթախումբում արտահայտվում են տեղեկատվության ձեռք բերման գծով պետական պատվերի իրականացման ծախսերը:

**Ենթախումբ 13. Կրոնական ծրագրեր**

Նշված ենթախումբում արտահայտվում են կրոնի բնագավառում պետական ծրագրերի ֆինանսավորման (ներառյալ կրոնական կազմակերպություններին ֆինանսական աջակցության) գծով ծախսերը:

**Ենթախումբ 14. Երիտասարդական ծրագրեր**

Նշված ենթախումբում արտահայտվում են երիտասարդական միջոցառումների բնագավառում պետական ծրագրերի ֆինանսավորման (ներառյալ երիտասարդական կազմակերպություններին ֆինանսական աջակցության) գծով ծախսերը:

**Ենթախումբ 15. Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ**

Նշված ենթախումբում արտահայտվում են քաղաքական կուսակցություններին, արհմիություններին, ինչպես նաև այլ հասարակական (բացառությամբ կրոնական և երիտասարդական) կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրման ծախսերը:

**Ենթախումբ 16. Այլ ծրագրեր**

Նշված ենթախումբում արտահայտվում են սույն հիմնական խմբին վերաբերող, սակայն վերջինիս վերը թվարկված ենթախմբերին չդասվող ծրագրերի իրականացման ծախսերը:

**Խ ՈՒ Մ Բ 08**

**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ - ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Նշված խմբում արտահայտվում են բնակարանային-կոմունալ տնտեսության զարգացման ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության իրականացման գծով ծախսերը:



**Ենթախումբ 01. Բնակարանային-կոմունալ տնտեսության պետական կառավարում**

Նշված ենթախումբում արտահայտվում են բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառում պետական կառավարման իրականացնող մարմինների պահպանման ծախսերը (նման առանձնացված մարմինների առկայության դեպքում):

**Ենթախումբ 02. Բնակարանային տնտեսություն և բնակարանային շինարարություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) բնակարանային ֆոնդի հիմնանորոգման գծով ծախսերը և այս բնագավառում կապիտալ ներդրումների (ներառյալ բնակարանների և բնակարանային շինարարության համար հողամասերի ձեռք բերումը),

բ) բնակչությանը, բնակարանային պայմանների բարելավման՝ անհատական բնակարանային շինարարության և հիմնանորոգման, բնակելի տների (բնակարանների) ձեռք բերման համար տրանսֆերտների կամ վարկերի տրամադրման գծով ծախսերը:

Նշված ենթախումբում արտահայտվում են նաև բնակարանային տնտեսության և բնակարանային շինարարության բնագավառում տնտեսավարող սուբյեկտներին վարկերի, սուբսիդիաների և այլ տրանսֆերտների հատկացման գծով ծախսերը

**Ենթախումբ 03. Աղբահանություն, թափոնների վերամշակում և փողոցների մաքրում**

Նշված ենթախումբում արտահայտվում են աղբահավաքման, տարբեր վայրերից (բնակելի շինություններ, գործարաններ, հանքափորեր) և տարբեր միջոցների (ավտոմոբիլային, խողովակային, կոյուղու համակարգեր) ու մշակման մեթոդների (այս քիմիական մշակում) օգնությամբ կամ ընդերքում թաղելու ձևով կենցաղային և այլ թափոնների հեռացման (ներառյալ քիմիա ռադիոակտիվ թափոնների, պինդ նյութերի, հեղուկների և գազերի, այդ թվում՝ անձրևաջրի) գծով ծախսերը:

Նշված ենթախումբում արտահայտվում են նաև այս բնագավառում կապիտալ ներդրումների, ինչպես նաև փողոցների, մա մաքրման, ջրման և ձյան մաքրման գծով ծախսերը, ինչպես նաև աղբահանության, թափոնների վերամշակման և փողոցների մաքրման բնագավառում տնտեսավարող սուբյեկտներին վարկերի, սուբսիդիաների և այլ տրանսֆերտների հատկացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 04. Ջրամատակարարում և կոյուղու համակարգերի շահագործում**

Նշված ենթախումբում արտահայտվում են խմելու ջրով մատակարարման և կոյուղու համակարգերի գործունեության (ներառյալ ցանցերի նորոգումը) ապահովման, այս բնագավառում կապիտալ ներդրումների, ինչպես նաև ջրերի պաշարների, առկա ռեսուրսների և խմելու ջրի նկատմամբ պահանջումների գնահատման աշխատանքների գծով ծախսերը:

Նշված ենթախումբում արտահայտվում են նաև ջրամատակարարում և կոյուղու համակարգերի շահագործման բնագավառում տնտեսավարող սուբյեկտներին վարկերի, սուբսիդիաների և այլ տրանսֆերտների հատկացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 05. Այլ ծրագրեր**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) փողոցների լուսավորման համակարգերի շահագործման ծախսերը.

բ) բաղնիք-վազքատների (ներառյալ բաղնիք-վազքատների շինարարությունը), թաղման ծառայությունների գծով պետական գործունեության հետ կապված ծախսերը.

գ) բարեկարգման օբյեկտների (փողոցներ, այլ տարածքներ, կամուրջներ, հետիոտնի ստորգետնյա անցումներ, ջրավազա գերեզմանոցներ, աղբավայրեր) պահպանման և նորոգման ծախսերը.

դ) կանաչապատման աշխատանքների գծով ծախսերը.

ե) անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման ուղղությամբ իրականացման ծրագրերի գծով

ծախսերը.

զ) բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառին վերաբերող այլ ծրագրերի ֆինանսավորման ծախսերը (ներառյալ կապիտալ ներդրումները):

Նշված ենթախմբում արտահայտվում են նաև բնակարանային-կոմունալ տնտեսության տնտեսվարող սուբյեկտներին վարկերի, սուբսիդիաների և այլ տրանսֆերտների հատկացման գծով այն ծախսերը, որոնք չեն դասվում սույն խմբի վերը նշված ենթախմբերին:

**Խ ՈՒ Մ Բ 09**

**ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԼԻՐ**

Նշված խմբում արտահայտվում են էներգիայի արտադրության և բաշխման բնագավառում պետական գործունեության, ինչպես նաև վառելիքային ռեսուրսների հետախուզման, գնահատումների, արդյունահանման և օգտագործման հետ կապված ծախսերը:

**Ենթախումբ 01. Վառելիքային և էներգետիկ համալիրի պետական կառավարում**

Նշված ենթախմբում արտահայտվում են վառելիքային և էներգետիկայի բնագավառում պետական կառավարում, ինչպես պետական հսկողություն իրականացնող մարմինների պահպանման ծախսերը:

**Ենթախումբ 02. Էլեկտրաէներգետիկա**

Նշված ենթախմբում արտահայտվում են Էլեկտրաէներգիայի արտադրության ու մատակարարման աշխատանքների կառավարման, ջերմա և հիդրոէլեկտրակայանների, քամու և արևի էներգիայի կայանների, ինչպես նաև էներգիայի բաշխման համակարգերի (հաղորդալարեր, բաշխիչ կայաններ և այլն) շահագործման, հիմնանորոգման, վերազինման գծով ծախսերը և կապիտալ ներդրումները: Նշված ենթախմբում արտահայտվում են նաև Էլեկտրաէներգիայի արտադրության ու բաշխման ոլ տնտեսվարող սուբյեկտներին վարկերի, սուբսիդիաների և այլ տրանսֆերտների հատկացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 03. Ատոմային էներգետիկա**

Նշված ենթախմբում արտահայտվում են էներգիայի արտադրության ատոմային կայանների շահագործման, պահպանման կապիտալ ներդրումների (ներառյալ հիմնավորումները), միջուկային վառելիքի արտադրության, գնման և ներմուծման գծով ծախսերը: Նշված ենթախմբում արտահայտվում են նաև օգտագործված վառելիքի պահպանման համակարգերի ստեղծման ծախսերը, ինչպես նաև նշված բնագավառին վերաբերող այլ ծախսերը, ներառյալ տնտեսվարող սուբյեկտներին սուբսիդիաներ այլ տրանսֆերտների կամ վարկերի հատկացումը:

**Ենթախումբ 04. Վառելիքային համալիր**

Նշված ենթախմբում արտահայտվում են վառելիքային ռեսուրսների (ածուխ, տորֆ, նավթ, գազ և այլն) հետախուզման, արդյունահանման նախագծման և կազմակերպման գծով ծախսերը, ինչպես նաև նշված բնագավառին վերաբերող կապիտալ ներդրումները և այլ ծախսերը, ներառյալ տնտեսվարող սուբյեկտներին սուբսիդիաների, այլ տրանսֆերտների կամ վարկերի հատկացումը:

**Ենթախումբ 05. Էներգետիկայի բնագավառի այլ գործունեություն**

Նշված ենթախմբում արտահայտվում են ջեռուցման, տաք ջրով մատակարարման, ձմռան պայմաններում բնակչության

կազմակերպություններին վառելիքով ապահովման կենտրոնացված միջոցառումների իրականացման ուղղությամբ ծախսերը քաղաքներում և գյուղերում գազի տրման և բաշխման կարգավորման, գազամատակարարման համակարգի վերականգնման ծախսերը, ինչպես նաև նշված բնագավառին վերաբերող կապիտալ ներդրումները և այլ ծախսերը, ներառյալ տնտեսվարող սուբյեկտներին սուբսիդիաների, այլ տրանսֆերտների կամ վարկերի հատկացումը:

**Խ ՈՒ Մ Բ 10**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԶԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Նշված խմբում արտահայտվում են գյուղատնտեսական գործունեության և ձկնաբուծության աջակցման, անտառների, ջր տնտեսության կառույցների և ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանման միջոցառումների գծով ծախսերը:

**Ենթախումբ 01. Գյուղատնտեսության պետական կառավարում**

Նշված ենթախումբում արտահայտվում են գյուղատնտեսության բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմինների (ներառյալ մարզային-ագրարային պետական տեսչությունների) պահպանման ծախսերը, ինչպես նաև նշված բնագավառում կապիտալ ներդրումները:

**Ենթախումբ 02. Հողերի բարելավման աշխատանքներ**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

- ա) ոռոգելի հողերի, մելիորատիվ վիճակի բարելավման, դրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների իրականացման ծախսերը,
- բ) գյուղատնտեսության մեջ օգտագործվող հողատեսքերը պահպանելու նպատակով հակահեղեղային միջոցառումների իրականացման ծախսերը,
- գ) հողաշինարարական և հողօգտագործման միջոցառումների իրականացման ծախսերը,
- դ) խոտհարքների և արոտների արմատական և մակերեսային բարելավման և խախտված հողերի վերականգնման աշխատանքների իրականացման ծախսերը,
- ե) ոռոգելի և չորացած հողերի մելիորատիվ վիճակի համալիր դիտարկման և հետազոտական աշխատանքների իրականացման ծախսերը,
- զ) գյուղքիմիացման միջոցառումների իրականացման ծախսերը,
- է) նշված բնագավառին վերաբերող այլ ծրագրերի իրականացման ծախսերը:

**Ենթախումբ 03. Զկնաբուծություն և ջրային տնտեսություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

- ա) ձկնաբուծության կազմակերպման գծով ծախսերը.
- բ) ջրային տնտեսության կառույցների շահագործման, տեխնիկական վիճակի բարելավման, վերականգնման և վերանորոգ աշխատանքների իրականացման ծախսերը, նշված ոլորտում կապիտալ ներդրումները, ինչպես նաև ջրամբարներում պահավ ծառայությունների իրականացման ծախսերը.
- գ) նշված բնագավառին վերաբերող այլ ծախսերը, ներառյալ տնտեսվարող սուբյեկտներին սուբսիդիաների, այլ տրանսֆերտների կամ վարկերի հատկացումը:

**Ենթախումբ 04. Բույսերի պաշտպանություն և սերմնաբուծություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

- ա) գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումների իրականացման ծախսերը,
- բ) բույսերի պաշտպանության հանրապետական կայանի և բույսերի կարանտինային պետական տեսչության պահպանման

ծախսերը,

զ) գյուղացիական տնտեսություններին բարձր վերարտադրության սերմերով, կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութով, սս տարածված մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տնկիներով ապահովելու գծով ծախսերը,

դ) սերմերի որակի հսկողության ու պետական սորտավորձարկման, հիդրոմետասպասարկման և սերմերի ապրոբացիայի միջոցառումների իրականացման ծախսերը,

ե) բույսերի պաշտպանության և սերմնաբուծության բնագավառին վերաբերող այլ ծախսերը, ներառյալ ապահովագրակ մարմինների կանոնադրական հիմնադրամում մասնակցության, հակակարկտային միջոցառումների, տնտեսվարող սուբյեկտ սուբսիդիաների, տրանսֆերտների կամ վարկերի տրամադրման ծախսերը:

**Ենթախումբ 05. Տոհմաբուծություն, անասնաբուժություն և հակահամաճարակային միջոցառումներ**

Նշված ենթախումբում արտահայտվում են.

ա) տոհմաբուծության և արհեստական սերմնավորման միջոցառումների գծով ծախսերը.

բ) հակահամաճարակային միջոցառումների գծով ծախսերը.

զ) անասնաբուժական և սանիտարական սպասարկման միջոցառումների, անասնաբուժական սահմանային հսկիչ ու հաւ նշանակության կետերի պահպանման ծախսերը.

դ) նշված բնագավառին վերաբերող այլ ծախսերը, ներառյալ տնտեսվարող սուբյեկտներին սուբսիդիաների, այլ տրանսֆերտների կամ վարկերի հատկացումը:

**Ենթախումբ 06. Անտառային տնտեսություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են անտառների պահպանման, վերականգնման, ընդլայնման, նոր անտառների հիմնման, ռացիոնալ օգտագործման և պաշտպանության միջոցառումների, ներառյալ անտառատնկման, վնասատուների և հիվանդությունների դեմ միջոցառումների, անտառային հրդեհների դեմ պայքարի գծով ծախսերը, նշված բնագավառին վերաբերող այլ ծախսերը, ներառյալ տնտեսվարող սուբյեկտներին սուբսիդիաների, այլ տրանսֆերտների կամ վարկերի հատկացումը:

**Ենթախումբ 07. Այլ ծրագրեր**

Նշված ենթախումբում արտահայտվում են գյուղատնտեսության բնագավառին վերաբերող առանձին ծրագրերի իրականա ծախսերը, որոնք ներառված չեն սույն խմբի 01-06 ենթախումբերում (ներառյալ կապիտալ ներդրումները):

**Խ ՈՒ Մ Բ 11**

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԱԾՈՆԵՐ (բացառությամբ՝ վառելիքի), ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅ. ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Նշված խումբում արտահայտվում են արդյունաբերության (բացառությամբ վառելիքային), բնապահպանության, երկրաբանահետախուզության, շինարարության (նախագծահետախուզական աշխատանքների) պետական կարգավորման միջոցառումների և ծրագրերի իրականացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 01. Արդյունաբերության, հանքային հանածոների պաշարների, շինարարության և բնապահպանության բնագավառում պետական կառավարում**

Նշված ենթախումբում արտահայտվում են արդյունաբերության, հանքային հանածոների պաշարների, շինարարության և բնապահպանության բնագավառում պետական կառավարում և պետական հսկողություն իրականացնող մարմինների պահպանման ծախսերը, ինչպես նաև նշված բնագավառում կապիտալ ներդրումները:

**Ենթախումբ 02.**

**Լեռնահանքային արդյունաբերություն և երկրաբանահետախուզություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են լեռնահանքային արդյունաբերության զարգացման, վերագինման, ընդլայնման ծրագրերի, ինչպես նաև օգտակար հանածոների (բացառությամբ՝ վառելիքի, որը դասակարգվում է 09 հիմնական խմբի 04 ենթախումբում) հետախուզման և օգտագործման, հանքավայրերի շահագործման միջոցառումների (ներառյալ կապիտալ ներդրումները), ինչպես նաև նշված բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին վարկերի, սուբսիդիաների և տրանսֆերտների հատկացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 03.**

**Վերամշակող արդյունաբերություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են վերամշակող արդյունաբերության զարգացման, վերագինման, ընդլայնման ծրագրերի իրականացման (ներառյալ կապիտալ ներդրումները), ինչպես նաև նշված բնագավառի տնտեսվարող սուբյեկտներ վարկերի, սուբսիդիաների և այլ տրանսֆերտների տրամադրման գծով ծախսերը:

**Ենթախումբ 04.**

**Նախագծահետախուզական աշխատանքներ**

Նշված ենթախումբում արտահայտվում են շինարարության բնագավառում նախագծահետախուզական աշխատանքների՝ ճարտարապետական նախագծման աշխատանքների, տեխնիկական նորմերի և ստանդարտների մշակման և դրանց կատար նկատմամբ հսկողությունը, շինարարական օբյեկտներում անվտանգության տեխնիկայի պահպանման հսկողությունը:

**Ենթախումբ 05.**

**Բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Նշված ենթախումբում արտահայտվում են բնության հատուկ պահպանվող տարածքների՝ պետական արգելանոցների, ազգային պարկերի, պետական արգելավայրերի և բնության հուշարձանների (բացառությամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային պատկանող բուսաբանական այգիների, որոնց գծով ծախսերը արտահայտվում են 04 խմբի 15 ենթախումբում) պահպանման գծով ծախսերը (ներառյալ կապիտալ ներդրումները):

**Ենթախումբ 06.**

**Բնապահպանական այլ միջոցառումներ**

Նշված ենթախումբում արտահայտվում են բնապահպանության հանրապետական և տարածքային տեսչությունների, շրջս միջավայրի մոնիտորինգի կենտրոնի, վերլուծական տեղեկատվական կենտրոնի պահպանման ծախսերը, ինչպես նաև հակատղանքային և սույն խմբի 01-06 ենթախումբերում չընդգրկված բնապահպանական այլ միջոցառումների գծով ծախսերը (ներառյալ կապիտալ ներդրումները):

**Ենթախումբ 07.**

**Այլ ծրագրեր**

Նշված ենթախումբում արտահայտվում են սույն հիմնական խմբին վերաբերող, սակայն վերջինիս վերը թվարկված ենթախմբերին չդասվող առանձին ծրագրերի իրականացման ծախսերը:

**Խ ՈՒ Մ Բ 12**

**ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ**

Նշված խումբում արտահայտվում են տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառում պետական

գործունեության, տրանսպորտային ենթակառուցվածքների և կապի համակարգերի պահպանման ու զարգացման միջոցառումների և ծրագրերի իրականացման գծով ծախսերը:

**Ենթախումբ 01. Տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառում պետական կառավարում**

Նշված ենթախումբում արտահայտվում են տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմինների կենտրոնական ապարատների պահպանման ծախսերը, ինչպես նաև նշված բնագավառում կապիտալ ներդրումները:

**Ենթախումբ 02. Ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրական տրանսպորտ**

Նշված ենթախումբում արտահայտվում են ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրատրանսպորտի (ներառյալ մետրոպոլիս տնտեսվարող սուբյեկտներին վարկերի, սուբսիդիաների և այլ տրանսֆերտների տրամադրման գծով ծախսերը, ինչպես նաև բնագավառում կապիտալ ներդրումները:

**Ենթախումբ 03. Ջրային տրանսպորտ**

Նշված ենթախումբում արտահայտվում են ջրային տրանսպորտի սպասարկման հետ կապված կառույցների շահագործում նախագծումը, ընդլայնումը և վերանորոգումը, ինչպես նաև կապիտալ ներդրումները: Նշված ենթախումբում արտահայտվում է նաև այս բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին վարկեր, սուբսիդիաներ և այլ տրանսֆերտներ տրամադրելու գծով ծախս

**Ենթախումբ 04. Երկաթուղային տրանսպորտ**

Նշված ենթախումբում արտահայտվում են երկաթուղային տրանսպորտի (ներառյալ քաղաքային գծերի, կայանների, թունելների, կամուրջների) շահագործման, պահպանման գծով ծախսերը և կապիտալ ներդրումները (բացառությամբ մետրոպոլիտենի հետ կապված ծախսերի, որոնք արտահայտվում են սույն խմբի 02 ենթախումբում): Նշված ենթախումբում արտահայտվում են նաև այս բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին վարկեր, սուբսիդիաներ և այլ տրանսֆերտներ տրամադրելու գծով ծախսերը:

**Ենթախումբ 05. Օդային տրանսպորտ**

Նշված ենթախումբում արտահայտվում են օդային տրանսպորտի և դրան սպասարկող կառույցների (ներառյալ օդանավակայանները, թռիչքային գոտիները, վերջնական կայանները, անգարները, օդային նավիգացիայի միջոցների ապահովում շահագործման, պահպանման գծով ծախսերը և կապիտալ ներդրումները: Նշված ենթախումբում արտահայտվում են նաև այս բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին վարկեր, սուբսիդիաներ և տրանսֆերտներ տրամադրելու գծով ծախսերը:

**Ենթախումբ 06. Խողովակային տրանսպորտ**

Նշված ենթախումբում արտահայտվում են խողովակաշարերի (ներառյալ պոմպային, մղիչ կայանները և այլն) շահագործում վերանորոգման, ընդլայնման գծով ծախսերը և կապիտալ ներդրումները: Նշված ենթախումբում արտահայտվում են նաև այս բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին վարկեր, սուբսիդիաներ և տրանսֆերտներ տրամադրելու գծով ծախսերը:

**Ենթախումբ 07.**

**Ճանապարհային տնտեսություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են պետական, մարզային և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ներառյալ քաղաքային ճանապարհները և փողոցները, ճանապարհների հետ կապված կառույցները (կամուրջները, թունելները, ավտոկանգառները, ավտոկայանները) պահպանման, շահագործման, նորոգման ծախսերը և կապիտալ ներդրումները: Նշված ենթախումբում արտահայտվում են նաև հիշյալ բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին վարկեր, սուբսիդիաներ և տրանսֆերտներ տրամադրելու գծով ծախսերը:

**Ենթախումբ 08.**

**Կապ**

Նշված ենթախումբում արտահայտվում են փոստային, հեռախոսային, հեռագրային, կաբելային, ռադիո և արբանյակային կապի օբյեկտների շահագործման և վերանորոգման ծախսերը և կապիտալ ներդրումները: Նշված ենթախումբում արտահայտվում են նաև այս բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին վարկեր, սուբսիդիաներ և տրանսֆերտներ տրամադրելու գծով ծախսերը:

**Ենթախումբ 09.**

**Այլ ծրագրեր**

Նշված ենթախումբում արտահայտվում են տրանսպորտային այլ համակարգերի (ինչպես, օրինակ, ճոպանուղիները) շահագործման, վերանորոգման, ընդլայնման գծով ծախսերը և կապիտալ ներդրումները, ինչպես նաև տրանսպորտի բնագավառի վերաբերող՝ սույն խմբի վերը նշված ենթախմբերին չդասվող առանձին ծրագրերի իրականացման ծախսերը:

**Խ ՈՒ Մ Բ 13**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նշված խմբում արտահայտվում են առևտրի, սպասարկումների, մատակարարման գործունեության և ընդհանուր բնույթի տնտեսական ծառայությունների բնագավառում ծախսերը:

**Ենթախումբ 01.**

**Առևտրի, սպասարկումների, մատակարարման գործունեության և ընդհանուր բնույթի տնտեսական ծառայությունների բնագավառում պետական կառավարում**

Նշված ենթախումբում արտահայտվում են առևտրի, սպասարկումների, մատակարարման գործունեության և այլ ընդհանուր տնտեսական ծառայությունների բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանման ծախսերը ինչպես նաև նշված բնագավառում կապիտալ ներդրումները:

**Ենթախումբ 02.**

**Առևտուր, սպասարկումներ և մատակարարման գործունեություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են առևտրի (առևտրի կենտրոններ, շուկաներ, պահեստներ և պահուստարաններ) սպասարկման (կենցաղային սպասարկման օբյեկտներ, հյուրանոցներ և ռեստորաններ) բնագավառների օբյեկտների նախագծման, շինարարության, շահագործման, վերանորոգման գծով ծախսերը:

**Ենթախումբ 03.**

**Նյութական ռեսուրսների պետական, համայնքային պահուստների ձևավորում և պահպանում**

Նշված ենթախումբում արտահայտվում են նյութական ռեսուրսների պետական (համայնքային) պահուստի ձևավորման և պահպանման գծով ծախսերը (ներառյալ պետական ռեզերվների վարչության համակարգի հիմնարկների պահպանումը):

**Ենթախումբ 04.**

**Զբոսաշրջիկություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են զբոսաշրջիկության բնագավառում գործունեության կազմակերպման, գովազդի պրոպագանդիստական միջոցառումների, տեղեկատվության տարածման, զբոսաշրջիկներին հրապուրելու հիմնական նպատակները և տոնախմբությունների և տոնախմբությունների անցկացմանը ֆինանսական աջակցման գծով ծախսերը:

**Ենթախումբ 05.**

**Ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայություններ**

Նշված ենթախումբում արտահայտվում են ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայությունների (ստանդարտացման, չափաբանության, սերտիֆիկացման, հեղինակային իրավունքների պաշտպանության, արտահանման և ներմուծման խրախուսման, ապրանքային և ֆոնդային շուկաների զարգացման աջակցման, փոքր բիզնեսի խրախուսման, հիդրոօթերևութաբանական դիտարկումների և կանխատեսումների, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքների) բնագավառում կատարվող ծախսերը, ինչպես նաև այն համալիր և բազմանպատակ ծրագրերի գծով ծախսերը և կապիտալ ներդրումները, որոնց, գլխավոր գործառույթի առանձնացման անհնարինության պատճառով, հնարավոր չէ դասակարգել սույն դասակարգման 01-12 հիմնական խմբերում և սույն խմբի 01-04 ենթախմբերում:

**Խ ՈՒ Մ Բ 14**

**ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ**

Նշված խմբում արտահայտվում են պետական և համայնքային պարտքային պարտավորությունների հետ գործառնությունների, ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրանսֆերտների և կարճաժամկետ ֆինանսական աջակցության (բյուջետային փոխառությունների) տրամադրման, համայնքների բյուջեներից ՀՀ պետական բյուջեին և այլ համայնքների բյուջեներին տրանսֆերտների տրամադրման, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններ պատվիրակված լիազորությունների իրականացման, ինչպես նաև սույն դասակարգման 01-13 հիմնական խմբերում չընդգրկված ծախսերը:

**Ենթախումբ 01.**

**Պետական (համայնքային) պարտքային պարտավորությունների հետ գործառնություն**

Նշված ենթախումբում արտահայտվում են ներգրավված փոխառու (վարկերի տեսքով կամ, պետական, համայնքի պարտատուների տեղաբաշխումից ստացված) միջոցների օգտագործման դիմաց տոկոսների վճարումները, ինչպես նաև պետական փոխառությունների տեղաբաշխման և դրանց վերաֆինանսավորման հետ կապված ծախսերը:

**Ենթախումբ 02.**

**Տրանսֆերտային վճարումներ ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներ**

Նշված ենթախումբում արտահայտվում են ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ինչպես որոշակի գործառույթ չդասվող ընդհանուր բնույթի տրանսֆերտների՝ դոտացիաների, այնպես էլ որոշակի գործառույթին դասվող նպատակային տրանսֆերտների՝ սուբվենցիաների տրամադրման գծով ծախսերը:

**Ենթախումբ 03.**

**Տրանսֆերտային վճարումներ համայնքների բյուջեներից ՀՀ պետական բյուջե կամ համայնքների բյուջեներին**

Նշված ենթախումբում արտահայտվում են համայնքների բյուջեներից ՀՀ պետական բյուջե կամ այլ համայնքների բյուջեներ ինչպես որոշակի գործառույթին չդասվող ընդհանուր բնույթի տրանսֆերտների, այնպես էլ որոշակի գործառույթին դասվող նպատակային տրանսֆերտների տրամադրման գծով ծախսերը:





Ա. ԸՆԹԱՅԻՎ ԾԱԽՍԵՐ այդ թվում	1	1	0	0	0	0	0	0000
1. ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ, ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ այդ թվում՝	1	1	1	0	0	0	0	0000
- աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ	1	1	1	1	0	0	0	0010
- հատուկ նպատակային ֆոնդերից տրվող պարգևատրում	1	1	1	2	0	0	0	0020
2. ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԸ այդ թվում՝	1	1	2	0	0	0	0	0000
2.1. Տոկոսավճարներ ներքին պարտքի դիմաց այդ թվում՝	1	1	2	1	0	0	0	0000
2.1.1. Տեղական ինքնակառավարման մարմիններին	1	1	2	1	1	0	0	0100
2.1.2. Ֆինանսական կազմակերպություններին այդ թվում՝	1	1	2	1	2	0	0	0000
-պետական ֆինանսական առևտրային հատվածին	1	1	2	1	2	1	0	0300
-պետական ֆինանսական ոչ առևտրային հատվածին	1	1	2	1	2	2	0	0310
-ոչ պետական ֆինանսական առևտրային հատվածին	1	1	2	1	2	3	0	0320
-ոչ պետական ոչ առևտրային ֆինանսական հատվածին	1	1	2	1	2	4	0	0330
2.1.3. Ոչ ֆինանսական կազմակերպություններին այդ թվում՝	1	1	2	1	3	0	0	0000
-պետական ոչ ֆինանսական առևտրային հատվածին	1	1	2	1	3	1	0	0400
-պետական ոչ ֆինանսական ոչ առևտրային հատվածին	1	1	2	1	3	2	0	0410
-ոչ պետական առևտրային ոչ ֆինանսական հատվածին	1	1	2	1	3	3	0	0420
-ոչ պետական ոչ առևտրային ոչ ֆինանսական հատվածին	1	1	2	1	3	4	0	0430
2.1.4. Տնային տնտեսություններին (ֆիզիկական անձանց)	1	1	2	1	4	0	0	0500
2.1.5. Այլ սուբյեկտներին	1	1	2	1	4	0	0	0550
2.2. Տոկոսավճարներ արտաքին պարտքի դիմաց այդ թվում՝	1	1	2	2	0	0	0	0000
2.2.1. Օտարերկրյա պետություններին	1	1	2	2	1	0	0	0600
2.2.2. Միջազգային կազմակերպություններին	1	1	2	2	2	0	0	0700
2.2.3. Այլ	1	1	2	2	3	0	0	0800
3. ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԸ այդ թվում՝	1	1	3	0	0	0	0	0000

3.1. Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ սուբվենցիաներ	1	1	3	1	0	0	0	0900
3.2. Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ այդ թվում՝	1	1	3	2	0	0	0	0000
3.2.1. Ֆինանսական կազմակերպություններին այդ թվում՝	1	1	3	2	1	0	0	0000
-պետական առևտրային հատվածին	1	1	3	2	1	1	0	1000
-պետական ոչ առևտրային հատվածին	1	1	3	2	1	2	0	1010
-ոչ պետական առևտրային հատվածին	1	1	3	2	1	3	0	1020
-ոչ պետական ոչ առևտրային հատվածին	1	1	3	2	1	4	0	1030
3.2.2. Ոչ ֆինանսական կազմակերպություններին այդ թվում՝	1	1	3	2	2	0	0	0000
-պետական առևտրային հատվածին	1	1	3	2	2	1	0	1100
-պետական ոչ առևտրային հատվածին	1	1	3	2	2	2	0	1110
-ոչ պետական առևտրային հատվածին	1	1	3	2	2	3	0	1120
-ոչ պետական ոչ առևտրային հատվածին	1	1	3	2	2	4	0	1130
4. ԸՆԹԱՑԻՎ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԸ այդ թվում՝	1	1	4	0	0	0	0	0000
4.1. Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	1	1	4	1	0	0	0	1200
4.2. Թոշակներ	1	1	4	2	0	0	0	1300
4.3. Կրթաթոշակներ	1	1	4	3	0	0	0	1400
4.4. Նպաստներ	1	1	4	4	0	0	0	1500
4.5. Այլ ընթացիկ տրանսֆերտային վճարներ, որից	1	1	4	5	0	0	0	0000
-պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	1	1	4	5	1	0	0	1600
-ոչ առևտրային կազմակերպություններին	1	1	4	5	2	0	0	1700
-ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցում	1	1	4	5	3	0	0	1800
-ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարներ	1	1	4	5	4	0	0	1850
-օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին	1	1	4	5	5	0	0	1900
-ընթացիկ արտաքին այլ տրանսֆերտային վճարներ	1	1	4	5	6	0	0	2000

5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՔՆՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱԽՄԵՐԸ այդ թվում՝	1	1	5	0	0	0	0	0000
5.1. Ապրանքների ձեռքբերում, այդ թվում՝	1	1	5	1	0	0	0	0000
5.1.1. Գույք, գրասենյակային ապրանքներ և նյութեր, որից	1	1	5	1	1	0	0	0000
-գրասենյակային ապրանքներ և նյութեր	1	1	5	1	1	1	0	2100
գույք և սարքավորումներ	1	1	5	1	1	2	0	2200
փափուկ գույք և հանդերձանք	1	1	5	1	1	3	0	2300
5.1.2. Դեղորայք և վիրակապային նյութեր	1	1	5	1	2	0	0	2400
5.1.3. Սննդամթերք	1	1	5	1	3	0	0	2500
5.1.4. Այլ ծախսեր	1	1	5	1	4	0	0	2600
5.2. Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ, այդ թվում՝	1	1	5	2	0	0	0	0000
-հանրապետության ներսում	1	1	5	2	1	0	0	2650
-արտասահմանյան	1	1	5	2	2	0	0	2700
5.3. Տրանսպորտային ծառայությունների վճար այդ թվում՝	1	1	5	3	0	0	0	0000
5.3.1. Սեփական տրանսպորտի պահպանման ծախսեր	1	1	5	3	1	0	0	2800
5.3.2. Տրանսպորտի վարձակալության ծախսեր	1	1	5	3	2	0	0	2900
5.4. Կապի ծառայությունների վճար	1	1	5	4	0	0	0	0000
5.4.1. Հեռախոսային կապի ծառայությունների վճար որից	1	1	5	4	1	0	0	0000
-քաղաքային հեռախոսների արձեռնադրման վճարի կատարման ծախսեր	1	1	5	4	1	1	0	3000
-հեռախոսային կապի այլ միջոցների արձեռնադրման վճարի կատարման ծախսեր	1	1	5	4	1	2	0	3100
-միջքաղաքային խոսակցությունների վճարի կատարման ծախսեր	1	1	5	4	1	3	0	3200
5.4.2. Փոստային ծառայության ձեռքբերման ծախսեր	1	1	5	4	2	0	0	3300
5.4.3. Կապի այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր	1	1	5	4	3	0	0	3400
5.5. Կոմունալ ծառայությունների վճար այդ թվում՝	1	1	5	5	0	0	0	0000
5.5.1. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր այդ թվում՝	1	1	5	5	1	0	0	0000

5.5.1.1. Վառելիքի և ջեռուցման ծախսեր	1	1	5	5	1	1	0	3500
5.5.1.2. Էլեկտրաէներգիայի ծախսեր	1	1	5	5	1	2	0	3550
5.5.2. Ջրնուղ-կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսեր	1	1	5	5	2	0	0	3600
5.5.3. Այլ կոմունալ ծախսեր	1	1	5	5	3	0	0	3700
5.6. Այլ ծախսեր այդ թվում՝	1	1	5	6	0	0	0	0000
5.6.1. Գույքի վարձակալության ծախսեր որից	1	1	5	6	1	0	0	0000
-շենքերի, շինությունների և բնակարանների վարձակալության ծախսեր	1	1	5	6	1	1	0	3800
-սարքերի և սարքավորումների վարձակալության ծախսեր	1	1	5	6	1	2	0	3900
-հողի վարձակալության ծախսեր	1	1	5	6	1	3	0	4000
-այլ գույքի վարձակալության ծախսեր	1	1	5	6	1	4	0	4100
5.6.2. Արտագերատեսչական պահպանության ծախսեր	1	1	5	6	2	0	0	4200
5.6.3. Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների կատարման ծախսեր	1	1	5	6	3	0	0	4300
5.6.4. Գույքի պահպանության և աշխատողների առողջության (կյանքի) ապահովագրության ծախսեր ապահովագրության ծախսեր որից	1	1	5	6	4	0	0	0000
-գույքի ապահովագրության ծախսեր	1	1	5	6	4	1	0	4500
-աշխատողների առողջության (կյանքի) ապահովագրության ծախսեր	1	1	5	6	4	2	0	4600
5.6.5. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նստաշրջանային ծախսեր	1	1	5	6	5	0	0	4800
5.6.6. Ներկայացուցչական ծախսեր որից	1	1	5	6	6	0	0	0000
-գույքի ձեռքբերման ծախսեր	1	1	5	6	6	1	0	4900
-ծառայությունների ձեռքբերման ծախսեր	1	1	5	6	6	2	0	4940
-այլ ծախսեր	1	1	5	6	6	3	0	4970
5.6.7. Ղեկավարի ֆոնդ	1	1	5	6	7	0	0	5000
5.6.8. Այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր որից	1	1	5	6	8	0	0	0000
-ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	1	1	5	6	8	1	0	0000
-այլ	1	1	5	6	8	9	0	5600

Բ. ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	1	2	0	0	0	0	0	0000
1. ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	1	2	1	0	0	0	0	0000
1.1. ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ	1	2	1	1	0	0	0	6300
1.2. ՆԱԽԱԳԾԱԷՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	1	2	1	2	0	0	0	6400
1.3. ԵՐԿՐԱԲԱՆԱԷՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	1	2	1	3	0	0	0	6450
1.4. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԻ) ՊԱՇՏՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	1	2	1	4	0	0	0	6500
1.5. ԿԱՊԻՏԱԼ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	1	2	1	5	0	0	0	0000
1.5.1. Շենքերի շինությունների և բնակարանների ձեռքբերման ծախսեր	1	2	1	5	1	0	0	6550
1.5.2. Սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	1	2	1	5	2	0	0	6600
1.5.3. Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր	1	2	1	5	3	0	0	6650
1.5.4. Հողի ձեռքբերման ծախսեր	1	2	1	5	4	0	0	6700
1.5.5. Հողի բարելավման ծախսեր	1	2	1	5	5	0	0	6750
1.5.6. Այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր	1	2	1	5	6	0	0	6800
1.6. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	1	2	1	6	0	0	0	0000
1.6.1. Բնական ռեսուրսների, հողամասերի օգտագործման իրավունքների ձեռքբերման ծախսեր	1	2	1	6	1	0	0	6850
1.6.2. Հեղինակային իրավունքների, արտոնագրերի, առևտրական նշանների օգտագործման իրավունքների ձեռքբերման ծախսեր	1	2	1	6	2	0	0	6900
1.6.3. Ոչ նյութական այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր	1	2	1	6	3	0	0	6950
1.7. ԳԵՈՂԵՉԻԱԿԱՆ-ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	1	2	1	7	0	0	0	7000
1.8. ԿԱՊԻՏԱԼ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	1	2	1	8	0	0	0	0000
1.8.1. Կապիտալ ներքին տրանսֆերտներ որից	1	2	1	8	1	0	0	0000
Պետական կառավարման մարմիններին	1	2	1	8	1	1	0	7100
Ֆինանսական կազմակերպություններին այդ թվում՝	1	2	1	8	1	2	0	0000
-պետական առևտրային հատվածին	1	2	1	8	1	2	1	7200
-պետական ոչ առևտրային հատվածին	1	2	1	8	1	2	2	7210

-նչ պետական առևտրային հատվածին	1	2	1	8	1	2	3	7220
-նչ պետական ոչ առևտրային հատվածին	1	2	1	8	1	2	4	7230
Ոչ ֆինանսական կազմակերպություններին այդ թվում՝	1	2	1	8	1	3	0	0000
-պետական առևտրային հատվածին	1	2	1	8	1	3	1	7240
-պետական ոչ առևտրային հատվածին	1	2	1	8	1	3	2	7250
-նչ պետական առևտրային հատվածին	1	2	1	8	1	3	3	7260
-նչ պետական ոչ առևտրային հատվածին	1	2	1	8	1	3	4	7270
Տնային տնտեսություններին (ֆիզիկական անձանց)	1	2	1	8	1	4	0	7300
1.8.2. Կապիտալ արտաքին տրանսֆերտներ որից	1	2	1	8	2	0	0	0000
-օտարերկրյա պետություններին	1	2	1	8	2	1	0	7400
-միջազգային կազմակերպություններին	1	2	1	8	2	2	0	7500
-այլ	1	2	1	8	2	3	0	7600
2. ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՄԵՐ	1	2	2	0	0	0	0	7700
Գ. ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ, այդ թվում՝	1	3	0	0	0	0	0	0000
1. Ներքին վարկավորում, այդ թվում՝	1	3	1	0	0	0	0	0000
1.1. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին այդ թվում՝	1	3	1	1	0	0	0	0000
1.1.1. Պետական կառավարման մարմիններին	1	3	1	1	1	0	0	7800
1.1.2. Տեղական ինքնակառավարման մարմիններին այդ թվում՝	1	3	1	1	2	0	0	0000
-վարկերի տրամադրում	1	3	1	1	2	1	0	7850
-փոխատվությունների տրամադրում	1	3	1	1	2	2	0	7900
1.2. Ֆինանսական կազմակերպություններին այդ թվում՝	1	3	1	2	0	0	0	0000
-պետական առևտրային հատվածին	1	3	1	2	1	0	0	8000
-պետական ոչ առևտրային հատվածին	1	3	1	2	2	0	0	8100
-նչ պետական առևտրային հատվածին	1	3	1	2	3	0	0	8200
-նչ պետական ոչ առևտրային հատվածին	1	3	1	2	4	0	0	8300

1.3. Ոչ ֆինանսական կազմակերպություններին այդ թվում՝	1	3	1	3	0	0	0	0000
-պետական առևտրային հատվածին	1	3	1	3	1	0	0	8400
-պետական ոչ առևտրային հատվածին	1	3	1	3	2	0	0	8500
-ոչ պետական առևտրային հատվածին	1	3	1	3	3	0	0	8600
-ոչ պետական ոչ առևտրային հատվածին	1	3	1	3	4	0	0	8700
1.4. Այլ ներքին վարկավորում	1	3	1	4	0	0	0	8800
2. Արտաքին վարկավորում այդ թվում՝	1	3	2	0	0	0	0	0000
2.1. Օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին այդ թվում՝	1	3	2	1	0	0	0	0000
2.1.1. Օտարերկրյա պետություններին	1	3	2	1	1	0	0	8900
2.1.2. Միջազգային կազմակերպություններին	1	3	2	1	2	0	0	9000
2.2. Այլ արտաքին վարկավորում	1	3	2	2	0	0	0	9500

**Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր**

**ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Բյուջեների ծախսերի տնտեսագիտական դասակարգումը դա բյուջետային ծախսերի խմբավորումն է՝ դրանց տնտեսակաբանորեն համապատասխան: Սույն դասակարգմամբ բյուջետային ծախսերը ըստ տնտեսական բովանդակության միավորված են երեք հիմնական ենթահատվածներում՝ ընթացիկ ծախսեր, կապիտալ ծախսեր և վարկավորում: Նշված դասակարգումն չի ընդգրկում ներգրավված փոխառու միջոցների մարման գծով ծախսերը, որոնք ներկայացված են ՀՀ պետակաբանության դեֆիցիտի, համայնքների բյուջեների ծախսերի ֆինանսավորման համար ներգրավված փոխառու միջոցների մարման ծախսերի դասակարգման մեջ: Հիշյալ ենթահատվածներում ծախսերը իրենց հերթին էլնելով իրենց բնույթից՝ դասակարգված ըստ գլուխների, ենթագլուխների, պարագրաֆների, ենթապարագրաֆների, մասերի և հոդվածների: Ստորև բերվում է նշված դասակարգման նկարագրությունը և կիրառման առանձնահատկությունները:

**Հ Ա Տ Վ Ա Ծ 1**

**ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱԽՍԵՐ**

**Ե Ն Թ Ա Հ Ա Տ Վ Ա Ծ 1**

**ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ**

Ընթացիկ ծախսերն իրենցից ներկայացնում են հատուցվող վճարումներ (բացառությամբ կապիտալ ակտիվների ձեռք բերել և ստեղծման համար) և ցանկացած անհատույց վճարումներ, որոնց նպատակը չի հանդիսանում այդ միջոցները ստացողի կամ կապիտալ ակտիվների ձեռք բերումը կամ ստեղծումը, կապիտալ ակտիվների վնասման կամ փլուզման կապակցությամբ կամ նրա ֆինանսական կապիտալի ավելացումը:

**Գ Լ ՈՒ Խ 1**

**ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ**



Նշված գլխին վերաբերում են պետական կամ համայնքների բյուջեների միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրության նպատակով կատարվող ծախսերը, այդ թվում.

- ա) հիմնական և լրացուցիչ աշխատավարձի՝ բոլոր տեսակի հավելումներով (այդ թվում՝ արտաժամյա, գիշերային, հանգստյան և տոնական օրերին կատարած աշխատանքի համար վճարված աշխատավարձերը) վճարման գծով.
- բ) դրամական պարգևների (անկախ վճարման պարբերականությունից) վճարման գծով.
- գ) համատեղության կարգով և աշխատողի պարտականությունների մեջ չմտնող աշխատանքների համար տրվող վարձատրության գծով.
- դ) ուսումնական հաստատություններում և դասընթացներում սովորելու, վարժական հավաքներին մասնակցելու ընթացքի պահպանվող աշխատավարձերի վճարման գծով.
- ե) ամենամսյա լրացուցիչ արձակուրդի համար տրվող վարձատրության գծով.
- ե) պարապուրդի ժամանակի համար տրվող վարձատրության գծով.
- զ) նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադրի պարապուրդի դիմաց վճարված աշխատավարձի վճայ գծով:

**Գ Լ ՈՒ Խ 2**

**ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԸ**

Տոկոսավճարների տակ հասկացվում են փոխառու միջոցների օգտագործման համար կատարվող վճարումները: Եթե պետությունը (տեղական ինքնակառավարման մարմինը) իր վրա է ընդունում երրորդ կողմի պարտքի գծով հաշվարկված տոկոսավճարների գծով վճարումների կատարումը, ապա այդ ուղղությամբ իրականացվող վճարումները նույնպես արտահայտվում են սույն գլխում:

**Ենթագլուխ 1. Տոկոսավճարներ ներքին պարտքի դիմաց**

Նշված ենթագլխին վերաբերում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆինանսական և ոչ ֆինանս կազմակերպություններից, այլ տնտեսավարող միավորներից և տնային տնտեսություններից (ֆիզիկական անձանցից), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից (տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում) ստացված փոխառու միջոցների օգտագործման դիմաց վճարումները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման իմաստով ոչ պետական հատվածին են դասվում այն կազմակերպությունները, որոնց բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին քաղաքացիներ կամ իրավաբանական անձանց սեփականությունն է, իսկ պետական հատվածին՝ այն կազմակերպությունները, որոնց բաժնետոմսերի 50 տոկոսը կամ ավելին պետական կամ համայնքի սեփականությունն է: ՀՀ պետական բյուջեից ՀՀ կենտրոն բանկին վճարվող տոկոսները արտահայտվում են պետական ոչ առևտրային ֆինանսական հատվածի հոդվածով, իսկ համայնքների բյուջեներից պետական բյուջեին կամ այլ համայնքների բյուջեներին, պետական բյուջեից համայնքների բյուջե վճարվող տոկոսները՝ պետական ոչ առևտրային ոչ ֆինանսական հատվածի հոդվածով:

**Ենթագլուխ 2. Տոկոսավճարներ արտաքին պարտքի դիմաց**

Նշված ենթագլխին վերաբերում են օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող այլ աուբյեկտներից ստացված փոխառու միջոցների օգտագործման դիմաց վճարումները:

Եթե պետությունը (տեղական ինքնակառավարման մարմինը) հանդես է գալիս որևէ տնտեսավարող միավորի (առաջնա պարտապանի) պարտքերի մարման երաշխավորողի դերում, ապա երաշխավորողի կողմից այդ պարտքի դիմաց հաշվարկվ տոկոսների վճարումները նշված ենթագլխում արտահայտվում են միայն այն դեպքում երբ դրա հետևանքով չի առաջանում երաշխավորողի պահանջ առաջնային պարտապանի նկատմամբ: Նման պահանջի առաջացման դեպքում առաջնային պարտապանի փոխարեն տոկոսների վճարման գծով երաշխավորողի ծախսերը դասակարգվում են որպես վարկավորում և արտահայտվում սույն դասակարգման 2 հատվածի համապատասխան գլխում:

**Գ Լ ՈՒ Խ 3**

**ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԸ**

**Ենթագլուխ 1. Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ սուբվենցիաներ**

Նշված ենթագլխին վերաբերում են պետական բյուջեից համայնքների բյուջեներին կապիտալ բնույթի խնդիրների լուծման համար նշանակված նպատակային անհատույց, անվերադարձ հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման գծով ծախսերը:

**Ենթագլուխ 2. Զեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաներ**

Նշված ենթագլխին վերաբերում են տնտեսավարող միավորներին՝ պետական և ոչ պետական հատվածի ֆինանսական և ֆինանսական (առևտրային և ոչ առևտրային) կազմակերպություններին բյուջեից կատարվող բոլոր անհատույց, անվերադարձ ընթացիկ վճարումները, որոնք ուղղված չեն այդ միավորների համար կապիտալ ակտիվների ձեռք բերմանը և հիմնական ֆոնդ կամ կանոնադրական դրամագլխի ավելացմանը և իրենից ներկայացնում են այդ միավորի ընթացիկ գործունեության արդյուն գոյացող եկամտի հավելում: Մասնավորապես, նշված ենթագլխում արտահայտվում են տնտեսավարող միավորի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացած վնասները ծածկելու նպատակով բյուջեից կատարվող ծախսերը:

**Գ Լ ՈՒ Խ 4**

**ԸՆԹԱՅԻՎ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԸ**

Ընթացիկ տրանսֆերտները դասակարգվում են ներքին և արտաքին տրանսֆերտների և ներառում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, տնային տնտեսություններին ոչ առևտրական կազմակերպություններին, ինչպես նաև օտարերկրյա պետություններին, միջազգային կազմակերպություններին բյուջեից կատարվող բոլոր անհատույց, անվերադարձ վճարումները (բացառությամբ սույն դասակարգման 1-ին հատվածի 2-րդ ենթահատվածի 1-ին գլխի 8-րդ ենթագլխին դասվող ծախսերի):

**Ենթագլուխ 1. Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ**

Նշված ենթագլխին վերաբերում են պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով հաշվարկվող դոտացիաների տրամադրման գծով ծախսերը:

**Ենթագլուխ 2. Թոշակներ**

Նշված ենթագլխին վերաբերում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան ՀՀ պետական բյուջեից և համայնքների բյուջեներից կենսաթոշակների վճարման գծով ծախսերը:

**Ենթագլուխ 3. Կրթաթոշակներ**

Նշված ենթագլխին վերաբերում են  
ա) ԲՈՒՀ-երում, տեխնիկումներում և ուսումնարաններում պետական պատվերով ուսանողների և սովորողների կրթաթոշակների վճարման գծով ծախսերը (2001 թվականի հունվարի 1-ից),  
բ) պետական պատվերով հետադիպումային ուսուցման գծով ասպիրանտների, դոկտորանտների, մագիստրանտների, օրդինատորների կրթաթոշակների վճարման գծով ծախսերը:

**Ենթագլուխ 4. Նպաստներ**

Նշված ենթագլխին վերաբերում են բյուջեների միջոցների հաշվին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նպաստների վճարման գծով ծախսերը:

**Ենթագլուխ 5.**

**Այլ ընթացիկ տրանսֆերտային վճարները**

Նշված ենթագլխին վերաբերում են.

ա) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն դասակարգման 1 հատվածի 1-ին ենթահատվածի 1-ին գլխում արտահայտվող վճարումների դիմաց կատարվող ծախսերը.

բ) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություններին բյուջեից կատարվելու անհատույց անվերադարձ վճարումները.

գ) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին պատգամավորական գործունեության համար տրվող ամենամսյա փոխհատուցման վճարները.

դ) ներքին այլ ընթացիկ տրանսֆերտների տրամադրման ծախսերը, մասնավորապես, փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումների գծով ծախսերը, պետության կողմից չընդունված կամ չերաշխավորված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող երրորդ կողմի պարտքի դիմաց հաշվարկված տոկոսավճարների կատարման ուղղությամբ բյուջեից իրականացվող վճարումները, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների և տնային տնտեսությունների (ֆիզիկական անձանց) փոխարեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բյուջե պետական կամ տեղական տուրքի վճարման գծով ծախսերը, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող տնային տնտեսություններին բյուջեից տրամադրվող փոխհատուցումները և օգնությունները (բացառությամբ սույն գլխի 2-4 ենթագլուխներին դասվող), այլ ընթացիկ ներքին տրանսֆերտային վճարների գծով ծախսերը.

ե) արտաքին ընթացիկ տրանսֆերտների տրամադրման ծախսերը, մասնավորապես, միջազգային կազմակերպություններ Հայաստանի Հանրապետության անդամակցության և վերջիններիս կանոնադրությամբ նախատեսված անհատույց այլ հատու մուծումների, օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին բյուջեից դրամական պաշտոնական տրանսֆերտների տրամադրման, այլ արտաքին ընթացիկ տրանսֆերտների տրամադրման ծախսերը:

**Գ Լ ՈՒ Խ 5**

**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՄՍԵՐԸ**

Ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերը ներառում են ապրանքների և ծառայությունների բոլոր ձեռքբերումները, բացառությամբ կապիտալ ակտիվների, դրանց արտադրության համար նշանակված ապրանքների և ծառայությունների, հողի, ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև արտակարգ և ռազմավարական պահուստների ձևավորման համար կատարվող ձեռքբերումների:

**Ենթագլուխ 1. Ապրանքների ձեռքբերման ծախսերը**

Նշված ենթագլխին վերաբերում են.

**Պարագրաֆ 1. Գույք, գրասենյակային ապրանքներ և նյութեր**

Նշված պարագրաֆում արտահայտվում են բյուջետային հիմնարկների կողմից իրականացվող.

- գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռքբերման ծախսերը.
- գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը.
- փափուկ գույքի և հանդերձանքի ձեռքբերման ծախսերը:

**Գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռք բերման ծախսերը** ներառում են.

ա) գրասենյակային, գծագրական և գրենական պիտույքների և նյութերի ձեռքբերման, ձևաթղթերի, հաշվապահական և վիճակագրական գրքերի, գործավարական գրքերի պատրաստման և ձեռքբերման, փաստաթղթերի և բրոշյուրների կազմման տպագրական և հրատարակչական ծախսերը, հաշվառման մեքենայացման գծով ծառայությունների վճարման, բյուջետային հիմնարկների համար հաշվողական կենտրոնների կողմից կատարված աշխատանքների արժեքի վճարման ծախսերը,

բ) բյուջետային հիմնարկների համար, բացառությամբ բուժական-պրոֆիլակտիկ և անասնաբուժական հաստատություններին և վիրակապային միջոցների ձեռքբերման ծախսերը,

գ) բյուջետային հիմնարկների համար սպիտակեղենի լվացքի և սանիտարա-հիգիենիկ սպասարկման ծախսերը,

դ) համագումարների, խորհրդակցությունների, կոնֆերանսների տնտեսական սպասարկման ծախսերը,

ե) տեղեկատու, պաշտոնական և պարբերական գրականության (թերթեր, ամսագրեր, բյուլետեններ, տեղեկատուներ և անոթագրեր) և ամսագրեր, բացառությամբ գրադարանների համար անոթագրերից:

**Փուլի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը** ներառում են հիմնական միջոց չհանդիսացող գույքի (բացառությամբ սույն պարագրաֆին դասվող գրասենյակային ապրանքների, նյութերի և փափուկ գույքի ու հանդերձանքի և ենթազվի 2-4 պարագրաֆներին դասվող գույքի) ձեռք բերման, տեղափոխման և տեղադրման ծախսերը:

**Փափուկ գույքի և հանդերձանքի ձեռքբերման ծախսերը** ներառում են փափուկ գույքի, այդ թվում՝ սպիտակեղենի հագուստի, կոշիկի, հանդերձանքի և անկողնային պիտույքների, ինչպես նաև հատուկ (պաշտպանիչ) հագուստի ձեռք բերման պատրաստման ծախսերը:

**Պարագրաֆ 2. Դեղորայք և վիրակապական նյութեր**

Նշված պարագրաֆում արտահայտվող ծախսերը դասակարգվում են հետևյալ ձևով.

ա) բուժական-պրոֆիլակտիկ բյուջետային հիմնարկների համար դեղորայքի, վիրակապային նյութերի ձեռքբերման ծախսայն նույն հիմնարկների համար ռենտգենային նկարահանումների համար ժապավենների, անալիզների իրականացման համար նյութերի ձեռքբերում, այլ հաստատություններում (սեփական լաբորատորիայի բացակայության դեպքում) կատարված անալիզների վճարումը.

բ) դոնորներին վճարումները, ներառյալ սնունդը.

գ) արյան ձեռքբերումը ներարկման համար.

դ) փոքր բժշկական գործիքների ձեռքբերման ծախսեր (ասեղ, ներարկիչ, ունելի, նշտար և այլն):

**Պարագրաֆ 3. Սննդամթերք**

Նշված պարագրաֆում արտահայտվում են սոցիալ-մշակութային ոլորտի բյուջետային հիմնարկներում սննդի ձեռքբերման գծով ծախսերը (հաշմանդամների համար տներ, մանկատներ, մանկապարտեզներ և մուր-մանկապարտեզներ, դպրոց-ինտերնատներ, հիվանդանոցներ և այլն):

**Պարագրաֆ 4. Այլ ծախսերը**

Նշված պարագրաֆում արտահայտվում են.

ա) թանկարժեք մետաղների գնման և վերամշակման, ՀՀ շքանշանների և մեդալների, պետական արժեթղթերի, ակցիայի դրոշմանիշների պատրաստման (ներառյալ տեղափոխման ծախսերը).

բ) կենդանաբանական այգու կենդանիների համար սննդամթերքի ձեռք բերման.

գ) կրթական հաստատություններում ուսումնական ծախսերը (խաղալիքներ և այլ գրենական պիտույքներ մանկապարտեզների համար).

դ) բժշկական սարքավորումների և գործիքների (բացառությամբ սույն ենթազվի 2 պարագրաֆում նշված) գեոդեզիական գործիքների, հորատող սարքավորումների, հակահրդեհային սարքավորումների ձեռքբերման ծախսերը.

ե) մշակույթի տներում ներկայացումների համար դեկորացիաների, կոստյումների և այլ նյութերի ձեռքբերման ծախսերը.

զ) սույն պարագրաֆում 1 հատվածի 1-ին ենթահատվածի 5-րդ գլխի 1-ին ենթազվի 1-3 պարագրաֆներում չընդգրկված ապրանքների ձեռքբերման ծախսերը, բացառությամբ կապիտալ ակտիվների, հիմնական ֆոնդերի արտադրության համար նշանակված ապրանքների, հողի, ոչ նյութական ակտիվների, արտակարգ և ռազմավարական պահուստների ձևավորման համար կատարվող ձեռքբերումների:

**Ենթազվի 2. Գործուղումները և ծառայողական ուղևորությունները**

Նշված ենթազվի վերաբերում են հանրապետության ներսում և արտասահմանյան գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը, այդ թվում՝

ա) գործուղումների դեպքում՝ ճանապարհաճախսը, օրապահիկը, բնակության վարձը, հանրապետությունից այլ օտար երկրներում մեկնելու համար օրենսդրությամբ սահմանված կարգով գանձվող տուրքը, գործուղման վայրում գրանցման վճարը, աշխատողների տեղափոխության դեպքում՝ օրապահիկը, ճանապարհաճախսը և մեկնադրամը,

- զ) դատարանների արտագնա նստաշրջանների մեկնելու հետ կապված ծախսերը,
- դ) ծառայողական շրջագայությունների ծախսերը,
- ե) աշխատակիցների առանձին կատեգորիաներին օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի փոխարին տրվող աշխատավարձի հավելումները,
- զ) ուսումնառության վայրից դուրս ուսանողների և սովորողների արտադրական (մանկավարժական) և ուսումնական պրակտիկայի և օլիմպիադաներ մեկնելու օրապահիկը:

**Ենթագլուխ 3. Տրանսպորտի ծառայությունների վճարը**

Նշված ենթագլխին վերաբերում են բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող տրանսպորտային միջոցն պահպանման, ինչպես նաև դրանց վարձակալման ծախսերը, ներառյալ ավտոմեքենաների և այլ տրանսպորտային միջոցներ ընթացիկ նորոգման, քսայուղերի, բենզինի, դիզելային վառելիքի ձեռք բերման ծախսերը:

**Ենթագլուխ 4. Կապի ծառայությունների վճարը**

Նշված ենթագլխին վերաբերում են կապի ծառայությունների գծով բյուջետային հիմնարկների ծախսերը՝ մասնավորապես՝ ռադիոյի և հեռախոսի օգտագործման աբոնենտային վարձը, միջքաղաքային և միջազգային հեռախոսային խոսակցություններ բոլոր տեսակի փոստային առաքումների (հեռագիր, ֆաքս և այլն), կապի այլ ծառայություններից օգտվելու համար վճարները:

**Ենթագլուխ 5. Կոմունալ ծառայությունների վճարը**

Նշված ենթագլխին վերաբերում են.

**Պարագրաֆ 1. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսերը**

Նշված պարագրաֆում արտահայտվում են.

- ա) ջեռուցման ծախսերը,
- բ) հնոցային վառելիքի և շինությունների տաքացման նպատակով այլ վառելիքի ձեռք բերման ծախսերը (այդ թվում՝ փոխադրման և պահեստավորման գծով ծախսեր):
- գ) բյուջետային հիմնարկների կողմից օգտագործված (ներառյալ շինությունների տաքացման նպատակով), ինչպես նաև բնակավայրերի բարեկարգման ծրագրերի շրջանակներում հրապարակների, փողոցների, բակերի և շինությունների լուսավոր համար օգտագործված էլեկտրաէներգիայի գծով ծախսերը:

**Պարագրաֆ 2. Ջրմուղ-կոյուղուց օգտվելու վարձը**

Նշված պարագրաֆում արտահայտվում են ջրամատակարարման և կոյուղու գծով ծախսերը:

**Պարագրաֆ 3. Այլ կոմունալ ծախսերը**

Նշված պարագրաֆում արտահայտվում են աղբահանության, շինությունների և փողոցների մաքրության պահպանման, վնասատուների և կրծողների դեմ պայքարի և դեզինֆեկցիայի, ինչպես նաև սույն դասակարգման 1 հատվածի 1-ին ենթահատվածի 5-րդ գլխի 5-րդ ենթագլխի 1-2 պարագրաֆներում չընդգրկված այլ կոմունալ ծառայությունների ձեռք բերման ծախսերը:

**Ենթագլուխ 6.**

**Այլ ծախսերը**

Նշված ենթագլխին վերաբերում են սույն դասակարգման 1 հատվածի 1-ին ենթահատվածի 1-4 գլուխների ենթագլուխներ սույն գլխի 1-5 ենթագլուխներում չընդգրկված ընթացիկ այլ ծախսերը, մասնավորապես.

- ա) շենքերի, շինությունների, բնակարանների, սարքերի, սարքավորումների, հողի, այլ գույքի (բացառությամբ տրանսպորտային միջոցների) վարձակալության ծախսերը,
- բ) արտագերատեսչական պահպանության ծախսերը,
- գ) բյուջետային հիմնարկների կողմից օրենքով սահմանված կարգով վճարվող հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները.
- դ) բյուջետային հիմնարկների գույքի պահպանության ապահովագրության ծախսերը.
- ե) բյուջետային հիմնարկների աշխատողների կյանքի, առողջության (բժշկական) ապահովագրության ծախսերը.
- զ) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նստաշրջանային ծախսերը.
- է) պարտքային պարտավորությունների տեղաբաշխման և ֆինանսավարկային հաստատությունների ծառայությունների դիմաց կումիսիոն վճարների գծով ծախսերը, ռադիոհեռուստատեսության եթերային ժամերի ձեռքբերման ծախսերը, գույքի ընթացիկ նորոգման, ավտոճանապարհների շահագործման և պահպանման ծախսերը, բյուջեների ծախսերի գործառական դասակարգման 02 խմբի 01-03 ենթախմբերում և 03 խմբի 01-02 ենթախմբերում արտացոլվող ընթացիկ բնույթի ծախսերը, բյուջետային հիմնարկի կարգավիճակ չունեցող միավորների կողմից պետական պատվերի շրջանակներում մատուցվող ընթացիկ բնույթի այլ ծառայությունների ձեռք բերման ծախսերը (2001 թվականի հունվարի 1-ից՝ բացառությամբ ուսումնական հաստատություններում վճարվող կրթաթոշակների):

Բացի այդ, առաջիկա տարվա ՀՀ պետական բյուջեի (համայնքների բյուջեների) նախագծի ձևավորման փուլում սույն ենթագլխին են դասվում այն ծախսերը, որոնք այդ փուլում հնարավոր չէ վերծանել ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտ. դասակարգման հոդվածների: Նման ծախսերի շարքին են դասվում.

- ՀՀ պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի, ինչպես նաև համայնքի վարչական բյուջեով նախատեսվող պահուստային ֆոնդի ձևավորման ծախսերը,
- ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերի (ղեկավարի ֆոնդեր) ձևավորման ծախսերը
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցչական ծախսերը:

Առաջիկա տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի ձևավորման փուլում սույն ենթագլխին կարող են դասվել նաև օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպան ծախսերը, օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության կցորդ պահպանման ծախսերը, ինչպես նաև ՀՀ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և այլ արտաքին դոնորների ֆինանսական աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում կատարվող ընթացիկ ծախսերը, եթե նշված նպատակով նախատեսվող հատկացումները այդ փուլում ինչ-ինչ պատճառներով հնարավոր չէ վերծանել ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

Այնուամենայնիվ, այդ ծախսերի ֆինանսավորման գծով ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով (համայնքի առաջիկա տարվա բյուջեի մասին համայնքի ավագանու որոշմամբ) նախատեսված հատկացումների հաշվին բյուջեի կատարման ընթացքում իրականացվող ծախսերը ենթակա են դասակարգման ըստ դրանց տնտեսագիտական բնույթի (բացառությամբ ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերի (ղեկավարի ֆոնդեր) ձևավորման ծախսերը): Ընդ ի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցչական ծախսերը ենթակա են դասակարգման ըստ տնտեսագիտական դասակարգման 1 հատվածի 1-ին ենթահատվածի 5-րդ գլխի 6-րդ ենթագլխի 6-րդ պարագրաֆում բերված հոդվածների:

**Ե Ն Թ Ա Հ Ա Տ Վ Ա Ծ 2**

**ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ**

Կապիտալ ծախսերը ներառում են վճարումները կապիտալ ակտիվների, ապրանքների ռազմավարական և արտակարգ պաշարների, հողի, ոչ նյութական ակտիվների ձեռք բերման համար ծախսերը, կամ այն անհատույց վճարումները, որոնց նպատակը ստացողի կողմից նմանատիպ ակտիվների ձեռք բերումն է, հիմնական ֆոնդերի վնասման կամ փլուզման կապակցությամբ վնասների փոխհատուցումը կամ այդպիսի տրանսֆերտներ ստացողների ֆինանսական կապիտալի ավելացումը:

**Գ Լ ՈՒ Խ 1**

**ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐՂՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ**

Կապիտալ ներդրումների գծով ծախսերը ներառում են հիմնական ֆոնդերի վերարտադրությունն ապահովելու և նոր հիմնական ֆոնդեր ստեղծելու նպատակով շինմունսաժային աշխատանքների կատարման, կապիտալ ակտիվների ձեռք բերելը կրաքանահետախուզական, գեոդեզիա-քարտեզագրման, նախագծման աշխատանքների գծով ծախսերը, ինչպես նաև նյութական ռեսուրսների ռազմավարական և արտակարգ նշանակության պետական (համայնքային) նյութական պահուստն ստեղծման նպատակով կատարվող ծախսերը:

**Ենթագլուխ 1. Կապիտալ շինարարության ծախսեր**

Նշված ենթագլխին վերաբերում են արտադրական և ոչ արտադրական նշանակության օբյեկտների նախագծման, դրանց կատարվող շինմունսաժային աշխատանքների իրականացման, ինչպես նաև կառուցվող օբյեկտների նախահաշիվներով նախատեսված հիմնական միջոցների ձեռքբերման գծով ծախսերը:

**Ենթագլուխ 2. Նախագծահետազոտական ծախսեր**

Նշված ենթագլխին վերաբերում են տիպային և ոչ տիպային օբյեկտների նախագծերի մշակման գծով ծախսերը, որոնք չեն մտնում օբյեկտի շինարարության արժեքի մեջ: Մասնավորապես՝ բնակավայրերի պլանավորման և կառուցապատման նախագծերի, էլեկտրասնուցման և մեկտրատիվ շինարարության, տնտեսության ճյուղերի տեղաբաշխման և զարգացման պլանմաների մշակման, հետախուզման, նախագծման և շինարարության, ինչպես նաև շինարարությունում նոր տեխնիկայի ներդրման, նախագծման և շինարարության առաջավոր փորձի ուսումնասիրման և ամփոփման նպատակով հետախուզական նախագծային և փորձարարական աշխատանքների գծով համահանրապետական նորմերի, տեխնիկական պայմանների և տեխնիկական հրահանգների տիպային նախագծերի մշակման գծով ծախսերը:

**Ենթագլուխ 3. Երկրաբանահետախուզական ծախսեր**

Նշված ենթագլխին վերաբերում են երկրաբանահետախուզական աշխատանքների գծով ծախսերը:

**Ենթագլուխ 4. Նյութական ռեսուրսների պետական (համայնքի) պահուստի ձևավորման ծախսեր**

Նշված ենթագլխին վերաբերում են նյութական ռեսուրսների ռազմավարական և արտակարգ պետական (համայնքի) պաշարների ձևավորման համար ապրանքների գնման ծախսերը:

**Ենթագլուխ 5. Կապիտալ ակտիվների ձեռք բերման ծախսեր.**

Նշված ենթագլխին վերաբերում են սույն գլխի 1 ենթագլխին չդասվող հիմնական միջոցների և այլ կապիտալ ակտիվների (շենքերի, կառուցվածքների, շինությունների, բնակարանների, տրանսպորտային միջոցների, փոխանցող հարմարանքների, ուժային մեքենաների ու սարքավորումների, հաշվիչ տեխնիկայի, չափիչ և կարգավորիչ սարքերի, գործիքների, հողի, արտադրական և տնտեսական գույքի, բանող և մթերատու անասունների, բազմամյա տնկարկների և այլն) ձեռք բերման ծախսերը (ներառյալ հիմնական միջոցների սեփականության իրավունքի փոխանցման կապակցությամբ ծախսերը): Նշված ենթագլխին դասվում են նաև թանգարանների համար մշակութային արժեքների, ինչպես նաև բազային գրադարանների համ գրքերի ձեռքբերման ծախսերը:

Հողի ձեռքբերման ծախսերը ներառում են հողի, անտառների, ներքին և ստորգետնյա ջրերի և օգտակար հանածոների հանքավայրերի ձեռքբերման ծախսերը: Այն դեպքում, երբ հողի արժեքը անհնար է տարանջատել ձեռք բերվող կառույցի արժեքից, վճարվող գումարը ամբողջապես պետք է ցույց տրվի որպես այն բաղադրիչի ծախս, որը գերակշռող է:

Բացի այդ, սույն ենթագլխին վերաբերում են հողում արտահայտված ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև, հս սեփականության իրավունքի փոխանցման կապակցությամբ կատարվող ծախսերը, ինչպես նաև ձեռք բերվող կապիտալ ակտիվների արժեքի մեջ մտնող ծառայությունների գծով ծախսերը:

Նշված ենթագլխին վերաբերում են նաև հողի բարելավմանն ուղղվող (մելիորացիայի, չորացման և այլ աշխատանքներ), ինչպես նաև վարձակալված շենքերի, կառուցվածքների, սարքավորումների և հիմնական միջոցներին վերաբերող այլ օբյեկտներ վրա կատարվող կապիտալ ներդրումների գծով ծախսերը:

**Ենթագլուխ 6. Ոչ նյութական ակտիվների ձեռք բերման ծախսեր**

Նշված ենթագլխին վերաբերում են ոչ նյութական ակտիվների՝ անտեսական գործունեության մեջ երկար ժամանակահատվածում (մեկ տարուց ավելի) օգտագործվող և եկամուտ բերող իրավունքների ձեռքբերման ծախսերը: Ոչ նյութական ակտիվների ձեռքբերման ծախսերը մասնավորապես ներառում են որոշակի շրջաններում բնական ռեսուրսները և օգտագործելու (շահագործելու) իրավունքների, ինչպես նաև հեղինակային իրավունքների, արտոնագրերի և առևտրական նշանների օգտագործմանը վերաբերող այլ կոնցեսիաներով և երկարաժամկետ պայմանագրերով իրավունքների ձեռքբերման ծախսերը: Բացի այդ, սույն ենթագլխին վերաբերում են ոչ նյութական ակտիվների սեփականության իրավունքի փոխանցման կապակցությամբ կատարվող ծախսերը:

**Ենթագլուխ 7. Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր**

Նշված ենթագլխին վերաբերում են գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների ֆինանսավորման գծով ծախսեր

**Ենթագլուխ 8. Կապիտալ տրանսֆերտների գծով ծախսեր**

Նշված ենթագլխին վերաբերում են հիմնական ֆոնդերի վնասման կամ փլուզման կապակցությամբ ստացողի մոտ առաջացած վնասների փոխհատուցման, ֆինանսական կապիտալի ավելացման, ձեռնարկությունների՝ մի շարք տարիների ընթացքում կուտակված կամ նրանց հսկողությունից դուրս արտակարգ հանգամանքների հետևանքով առաջացած վնասների փոխհատուցմանն ուղղված անհատույց միակողմանի միանվագ, ինչպես վճարողի, այնպես էլ ստացողի համար ակնհայտ ոչ կանոնավոր բնույթ կրող վճարումների գծով ծախսերը:

Սույն ենթագլխում արտահայտվում են նաև ֆինանսական հատվածի (բանկերի, ապահովագրական ընկերությունների և ֆինանսավարկային) կազմակերպությունների բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված վճարումների գծով ծախսերը (ոչ ֆինանսական հատվածի միավորների բաժնետիրական կապիտալում պետության կողմից կատարված ներդրումները արտահայտվում են ոչ թե սույն ենթագլխում, այլ սույն դասակարգման 3-րդ ենթահատվածում («Վարկավորում»):

